

# ՄԻՒԹԱՐ ԱՆԵՑԻ

ՄԱՏԵԱՆ  
ԱՇԽԱՐՀԱՎԼԻ  
ՀԱՆԴԻՍԱՐԱՆԱՅ

ԵՐԵՎԱՆ • 1983





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

# МХИТАР АНЕЦИ

## КНИГА ПО ВСЕМИРНОЙ ИСТОРИИ

Подготовка текста к изданию и исследование  
*А. Г. Маргаряна*

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1983

ՄԵՏԵԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

91-93  
100-102

# ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ

Մ Ա Տ Ե Ա Ն Ա Շ Խ Ա Ր Հ Ա Վ Է Պ  
Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն Ա Ց

A II  
69853

Աշխատատիրությունը  
Հ. Գ. Մարգարյանի



Տպագրված է ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի  
գիտական խումբի սրղչամբ

Պատասխանատու խմբագիր՝ Պ. Մ. ՄՈՒՐԿՆԻՍԸ

Գիտ. նշանակությունը և նշանակությունը՝  
գաղափարական գիտ. հոկտեմ. 2. 6. ՏԵՐ-ՂԵՎՈՆԻՅՅԵԼԸ  
և բանասիրական գիտ. բնիկանու Կ. Մ. ՄՈՒՐԿՆԻՍԸ

### Մխիթար Անեցի

Մ 792

Մատենան արխարհավիչայ հանդիտարանաց [Աղյա-  
տասիրությանը Հ. Գ. Մարգարյանի. [Պատ. խմբ.՝  
Պ. Մ. Մուրադյան]—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983.—  
140 էջ.

Մխիթար Անեցու Պատմությանը այլ միջնագրյան պատմա-  
գրության արևելագիտական շարժ նկատարչությունը ներկայացնող  
հուշարձաններից է: Հեղինակը ուղարկված սեղեկություններ է հա-  
ղորդում ինչպես հայոց, այնպես էլ զրազ, պարսից, արաբների ու  
Բյուրք-սելջուկների պատմության վերաբերյալ:

Ուսումնասիրության մեջ ջնկության են անված Պատմության  
հոտուցվածքը, սղրչությունը ու ժամանակագրական արժանանները,  
ինչպես նաև յուսարանված են Մխիթար Անեցու պատմագրական  
հայացքները ու պատմահայեցողության սկզբնները:

Աղյա-տասիրությանը էսխանանված է հայագետ, արևելագիտ պատ-  
մաբանների ու բանասիրների համար:

ՅՈՒՆԵՍԿՈՒ

Մ ————— 32—82

703 (92)—83

63. 2—63. 3 (2 Հ)

102. 9+9 (C 43) 1

## Ա Ռ Ա Ղ Ա Ր Ա Ն

### ՄԻՒԹԱՐ ԱՆԵՑՈՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Միշնադարյան Հայաստանի մայրաքաղաքներից ամենանշանավորը՝ Անին, ոչ միայն քաղաքական և տնտեսական, այլև գրական-մշակութային խոշոր կենտրոն էր: Աննպաստ Հանգամանքների քերամով, սակայն, անիական հարուստ և ինքնատիպ հոգևոր ժառանգությունից միայն հատուկենտ պատաստիկներ են մեզ հասնել: Ընդհանուր գծերով են հայտնի նաև հայ մշակույթի անեցի էրախտավորների կյանքն ու գրական-մշակութային գործունեությունը<sup>1</sup>: Այս հակաառաջիկը կիսողներից մեկն էլ ԺԲ—ԺԳ դարերի նշանավոր մատենագիր Մխիթար Անեցին է, որի համառոտ կենսագրական տրգեն նախորդ դարավերջին հյուսել են բազմազատակ հայագետներ Գարեգին Զարրհանայանը<sup>2</sup> և Ղևոնդ Այիշանը<sup>3</sup>: Պատմիչների վկայություններից հայտնի է, որ Մխիթար Անեցին հղել է Անիի մալր ճկեղեցու՝ կաթողիկնի, փակակալը<sup>4</sup>: Ծնթողովում է նաև, որ նա ապրել է կրթվել է Լոռուսոսի վանքում<sup>5</sup>: Հետամուտ լինելով իր երկասիրության համար անհրաժեշտ էյութեր հավաքելուն, Մխիթար Անեցին խնդրել է Մյունխաց Մանգիանոս եպիսկոպոսին գրելու Բաղայ թագավորության կործանման պատմությունը, որից էլ օգտվել է Ստեփա-

<sup>1</sup> ՏՃ՝ Ա. Մուշեղյան, Անիի բանասեր Վարդան Անեցին և էրա ներքուր, «Բանբեր Պատմագրական», N 10, Երևան, 1871, էջ 201:

<sup>2</sup> ՏԿ՝ Գ. Զարրհանայան, Հայիական հին պարսիկան պատմություն, Վենետիկ, 1885, էջ 701—707:

<sup>3</sup> ՏԷ՝ Ղ. Այիշան, Հայտաբանություն, Կ. Ա. Վենետիկ, 1901, էջ 100—101:

<sup>4</sup> Ստեփանոս Օրբելյան, Պատմություն Երևանի Սրբոսկան, Թիֆլիս, 1910, էջ 527, «Հայաստանի Պատմությունից Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 127—128:

<sup>5</sup> ՏԸ՝ Ղ. Այիշան, Երբոսի, Վենետիկ, 1881, էջ 27: Այս կեթադրության համար, հետաքուք է, որքաոք են ծառայել այն հիշատակարանները, որտեղում ԺԲ ց. վերջում Լոռուսոսի վանքում հիշվում է սոն Մխիթար Անեցի: ՏՃ՝ Գ. Զարրհանայան, Յիշատակարանը Անտաղայ, Կ. Ա. Անթիլիս, 1861, էջ 482—486 և 675—678, Երևան, Մխիթար Անեցի գրիչ և ճկարիչ, Վնտիկ, Ա տարի, Անթիլիս, 1948, էջ 182—182:

նու Օրբելյանը<sup>6</sup>, Մխիթար Անեցին բազմիցս հիշվում է հայ պատմագիր-ների ցանկերում<sup>7</sup>, սակայն միայն մեկում լրացուցիչ տեղեկություն կա: «Մխիթար Յանեցի, որ է Պատմութիւն Յանույ ջաղաքին, և այլ ինչ բանից պիտանեացա՞: Հետագա պատմիչներից նրան հիշատակում է նաև Մխիթար Այրիվանեցին, բայց լակ անունով<sup>8</sup>:

Մխիթար Անեցու մասին տեղեկությունները, ցավոք, այսքանով պառավում են: Անհայտ է, թե ճ՞րբ և որտե՞ղ է մահացել Մխիթարը: Վարդան Արևելցու աշն վկայությունը<sup>9</sup>, թե նա ապրում էր մինչև Տուղրիլ Գ-ի (1176—1194) ժամանակները<sup>10</sup>, հնարավորություն չի առիս նշգրիտ որոշելու նրա մահվան ժամանակը: Վարդան Արևելցին այս տեղեկությունը, հավանաբար, բազել է Մխիթար Անեցու Պատմությունից, որը հասնում էր մինչև Ոեմ (1193) թվականը, այսինքն՝ Տուղրիլ Գ-ի տարիները: Հավանաբար, Մխիթար Անեցին կենդանի էր նաև ժԳ զարի առաջին տասնամյակներին:

Միջնադարյան Հայաստանում, բացի Պատմությունից, բավականին հայտնի և տարածված էր Մխիթար Անեցու մեկ այլ աշխատություն՝ Արևզակի և լուսնի խաղաղումների պատճառների մասին բացատրություններ ավոզ պարսկերեն աստղագիտական երկի թարգմանությունը, որն այժմ կորած է<sup>12</sup>: Այս մասին առավել հանգամանորեն տեղեկացնում

6 Սահմանա Օրբելյան, Պատմութիւն Կառնեզին Մրազան, էջ 232: Հիշատակվում Սահմանաբ, Հաճնաբար, Սահմանա Գ Յարբ էլ Մանն է (1188—1216): Սահմանա Բ-ի ժամանակ (1126—1142) Մխիթարը զվար թե աշխան բարբ օրբի հասած լինը, որ այլօրի պատմը տար Մրանայց կղիսկուպոն և նրա մասին այլքան դասկասաւ: Եւզ օրի Օրբելյանը Յն՝ Լ Անուպան, Հայոց անճանտները բուտարան, Գ. Գ, Երվան, 1918, էջ 612, 615, Հմմտ. Սահմանա Օրբելյան, Պատմութիւն Կառնեզին Մրազան, էջ 240—242: Սահմանա կղիսկուպոն երկին, Քելպան երևում է, Եանթ է Եզ, նաև Վարդան Արևելցին, տն՝ ԷՀասարան Պատմութեան Վարդանայ վարդապետը, էջ 103, 125, 141:

7 Լ. Անուպան, Հայկական ժամանակագրություն, Գ. Ա, Երևան, 1969, էջ Լ—Լ, 111:

8 Կայն տեղում, էջ ԼV, Հմմտ. Ղ. Այրիյան, Հայտաբանութ, Գ. Ա, էջ 101:

9 Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մտպետ, 1860, էջ 23:

10 ԷՀասարան Պատմութեան Վարդանայ վարդապետը, էջ 37:

11 К. Э. Босворт, Мусульманские династии, М., 1971, стр. 162:

12 Պրոֆ. Լ. Սահմանաբ կարծում է, որ Մխիթար Անեցու թարգմանությունը պատվով է Մասնակազարանի № 2190 ձեռագրում (տն՝ Լ. Սեմյանով, Խաղարումների հայցի լուսարանումը հիւ Հայկական ձեռագրերում, Էճմիտեմիո, № ԺԱ—ԺԲ, 1951, էջ 43), սակայն նրա նշած փորձի շեղվածը (թ. 215ա—217բ) ոչ միայն որևէ ակնարկ չի պարունակում այլ երկի թարգմանություն լինելու վերաբերյալ, այլև բովանդակությամբ շատ

է Վարզան Արեւելցին. «Զայնու ժամանակօք Բարզմանեաց Մխիթար պատուեալ թահանայն կաթողիկէցի զՊատճառ խաւարման արեգական և յուսնի, ի պարսիկ ձիւղէ Ռեիէ անուն, զոր ասէր Բարզմանեալ՝ ի յուսեաց ի պարսաւ<sup>13</sup>: Պատմիչի անմիջական ծանօթությանն այդ Բարզմանութեանը կասկած չի հարուցում, որովհետև նա անդրադառնում է Արեգակի և Լուսնի խափարումների պատճառներին, այդպիսիք համարելով Արեգակի և Լուսնի ծածկվելը Ռասա և Զանայ ամպերից<sup>14</sup>: Մխիթար Անեցու այս աշխատութեանը թարգմանչակ է նաև Վարզանի ուսուցիչը՝ Վանական վարդապետը, որը «Յաղագս տարեմտիչ աշխատութեան մեջ հետեյալն է գրում. «Նու ասեն ամպեր Ռասա և Զանայ անուն, թէ նորա խաւարեցուցանեն պարեգակն ու զլուսինս<sup>15</sup>»:

Վարզան Արեւելցու գիշարութեանը Բարզմանութեան ժամանակի մասին անորոշ է. հաճանակաւ է այն թվականը, որ հաղորդում է Առաքել Դավթիճեցին. «Թուին ՌԶ (1157) Բարզմանեաց Մխիթար պատուեալ թահանայ Կաթողիկէցի զՊատճառ խաւարման արեգական և յուսնի, ի

---

հետ է Մխիթար Անեցու Լոխարութեանը լինելուց նքի, ըստ Վարզան Արեւելցու գիշարութեան, Մխիթար Անեցու Բարզմանութեան Արեգակի և Լուսնի խափարումները բացարձակ չեն Ռասա ու Զանայ ամպերի շարժումներով, այլ ինչպէս ասարկա թնազրով գիտնչչոյ անպէտ ընդհանրապէս չեն հրատարակում և խափարումներին սղում է բազմանիս գիտական բացարձակութեան Բացի այդ, Ս 3150 Առաքելի թնազրը շնորհման, որնք, ըստ Վարզան Արեւելցու, կցված են կզէ Մխիթար Անեցու Բարզմանութեանը:

<sup>13</sup> «Հաւարումն Պատմութեան Վարզանայ վարդապետի, էջ 137—138:

<sup>14</sup> Տե՛ս նախ անցում:

<sup>15</sup> Ե. Խաչիկյան, Թարգմ. տարեմտի ի վանական վարդապետի աստղագ. «Մատենադարանի գիտական նշումների ժողովածու», Ս 1, Երևան, 1941, էջ 162. «Ռասա և Չանայ» անվանումները նաև գիշարի դրոշմ ու պոէ նկատարում և այդ իմաստով ծանօթ են Հովհաննես Թարգմանչի (տե՛ս շարքումը Վրաց կաթողիկոսի ի Հարց Վարդապետ Եպիսկոպոսի, Պ. Լուսինյան, Յիշատակարանը Թուրքաց, էջ 345), Սամվէլ Անեցու (տե՛ս Ա. Արուսեանյան, Սամվէլ Անեցու ամենաբան և արեգակագիտական աշխատութեանը, շէքնաթիւ, Ս 2, 1953, էջ 38) և Վարզան Արեւելցու (որտարբերում է աստղանիւթի մեկնութեանը, տե՛ս Հ. Անտրյան, Հայերեն արձանագիտական բառարան, Վ. Ք, Երևան, 1972, էջ 79 և Գ. Գ, Երևան, 1979, էջ 142): Արեգակի և Լուսնի խափարումները գիշարի գրեթե անութեանը բացարձակ կազմում է ժողովրդական հաճախարակների հետ և տարածված է ըստ ժողովուրդների մասն Այս առումով, մտնադարան, «Մատենադարանի նշումն և պատմագիտական գիշարիկական ճիշտութեանը, տե՛ս Ա. Սոմուց, Казначейские сказки, «Залискя Восточного отделения Русского археологического общества», т. IX, вып. I—IV, СПб., 1896, стр. 41, прим. 1.

պարսկէ միտլէ Ռենթէ անուն, զոր ասէր թարգմանեալ Յուեաց ի Պարսուս<sup>16</sup>:

Ահադ. Հրայլա Անառլանը խոշոր հակասութիւն է տեսնում Առաքել Պապրիժեցու հազորդման և Մխիթար Այրիվանեցու համապատասխան վկայութիւն միջև՝ ըմբիթար քահանայ լինի թարգմանեաց զխաւարումքն արեղահան և յուսնի ի յոճիլէ պարսկէս<sup>17</sup>: Եւ հետեւյալն է գրում. «Ասում է սի յոճիլէ պարսկէս, որք կարելի է կարգալ կամ հասկանալ 1127 թ., միևնչեւ Առաքել պատմիչը գիտում է 1187 թ.»<sup>18</sup>: Անժանի գիտնականը, հաճանարար, եկապի ունի այն, որ «յոճիլէ»-ն կարելի է կարգալ իբրև թվական: Այդ դեպքում, սակայն, կատաներ 1027 (1—300 + 700—600 + 2—100 + 1—20 + 1—7—1027) և ոչ՝ 1127:

«Յոճիլէ»-ն իբրև թվական ընդունելը բացառում է նաև այն պատճառով, որ Մխիթար Այրիվանեցին ժամանակի հազորդման հիշյալ եղանակից չի օգտւում և շրտ կարիքը չկար էլ. նա իր Պատմութիւնը շարադրում է ժամանակագրական կարգով, ստորեթվերը հաշորգարար նշելով յուսանցրում: Եվ, վերջապես, և՛՛ յոճիլէ» բառը իբրև թվական ընդունենք, ապա կաղաճաղճի ետխաղասութիւն իմաստը:

Այսպիսով, կարելի է ընդունել, որ Մխիթար Անեցին մեզ չ'աւսած աստղագիտական երկը թարգմանել է պարսկերէնից, ինչպէս հազորում է Առաքել Պապրիժեցին, 1187 թվականին<sup>19</sup>:

Ինչ վերաբերում է խորհրդագր «Ռենթէ» (վարդան Արմելցի), «Յոճիլէ» (Մխիթար Այրիվանեցի) և «Ռենթէ» (Առաքել Պապրիժեցի) բառ-

<sup>15</sup> «Պատմութիւն Առաքել վարդապետի Պապրիժեցույ, Հաղորդագրութ, 1896, էջ 525: Այս վկայութիւնը հաստատում է նախ տեղեկութիւն բառացի անկայութեամբ՝ միևնչորյան ժամանակագրութիւններէջ մնում (Եժամանակագրութիւն (11—18-րդ դդ.): Եղեղութիւն պատրաստեց Եղեղը Եղեղ. Պապրիժեցու, շիւները Մասնակարարին, № 9, Երևան, 1969, էջ 255): Եւյն է կրկնում նաև Աճախը Տիգրանեցիութիւն, տե՛ս «Թաղմովչու», 1897, էջ 375:

<sup>17</sup> Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, էջ 64:

<sup>18</sup> Լ. Անառլան, Հայոց անձնանունների բառարան, Հ. 7, Երևան, 1946, էջ 376:

<sup>19</sup> Թարգմանութիւն թվականի արդք, աշխատանքների, զճար է վերջնականապէս լուծում համարել: Բացառում չէ, որ հետագայ որևէ ժամանակագիր փորձել է կշիռնակ վարդան Արմելցու անորոշ տեղեկութիւնը: Պատմիչ աշխատութեանում ետխաղ զլիք զեղերը արժում են հայոց ՌԶ (1187) թվականի երբև, ուստի, Ետխաղը է. հետագայ հեղինակներից մեկը «Հայտն ժամանակագրութիւնը հազորդող տեղեկութիւնը ևս թվարկել է ՌԶ թվականով: Ոչայրում է, որ Առաքել Պապրիժեցու Պատմութեան և Պապրիժեցու հրատարակած ժամանակագրութեան մէջ ՌԶ թ. ենքո հազորդող զեղերի կիրառութիւնները բառացի համընկնում են:

րին, ապա այս կապակցութեամբ Ալիշանը հետևյալն է գրում. «Այս բանին (խորաբ Մխիթար Անեցու լեզվական իմացութեան մասին է—Ն. Մ.) վկայութիւն է և պարսկերէն լեզուէ առաջաբանական գիրք յը թարգմանելն, արեգական և շուքի հաւարմանց վրայոք, շատ աղիւսակոք, որ պարսկերէն Ձիճ կըսուին, և աստղարաշխական գրուածք ալ նշանակեն. թերևս զնոյն պէտք է իմանալ Վարդան Պատմիչի Ոնիէ կոչածը, զոր ինքն իբրև պարսիկ հեղինակի անուն յիշէս<sup>20</sup>»:

Աստղագիտական երկի հունարենից պարսկերեն թարգմանված լինելու իրողութեամբ, սակայն, հիմք է տալիս ենթադրելու «Ոնիէ»-ի առաջացման մեկ այլ հանապարհ: Մշակութային այս կարևոր իրողութեան մասին ավանդողները, հաճանարար, ցանկացել են ընդգծել, որ թարգմանութեանը կատարվել է պարսկերենից, պարսկական տրիկանից և ոչ՝ հունարեն բնագրից: Այդ իրողութեամբ, թերևս, արձանագրվել է «Երևան» պարսկէտ մեզ, ինչպէս նաև Հայկազյան բառարանի հեղինակներն էին գրում՝ «ըստ յունարէն սեռոյ, և «Երևան»-ն իրոք կարող էր ընկալվել իբրև հեղինակի անուն:

Վերջին տարիներս բանասեր Գևորգ Արզարյանը կարծիք հայտնեց, որ Մխիթար Անեցու գրչին է պատկանում նաև «Պատմութիւն Յանույր» քաղաքին: Խորագիրը կրող երկը, այս կապակցութեամբ բերելով հետևյալ փաստարկները.

ա) «Պատմութիւն Յանույր» քաղաքին կրկի հորինման մասնակց համապատասխանում է Մխիթար Անեցու գործունեության մասնակից:

բ) Հայոց պատմագիրներէ ցանկերից մեկում այս երկը վերագրվում է Մխիթար Անեցուն, ընդ որում Անին հիշվում է «Յանու» մեզ, ինչպէս որ խնդրա առարկա երկում է:

ց) Նորահայտ ստեղծագործության հորինման հանգամանքների մասին տեղեկութունները նույնաբերութեամբ են Մխիթար Անեցու տեղեկութեաններին<sup>21</sup>:

Այսպէս հանգամանորեն շահագրգռեալով հիշյալ փաստարկներին թնտեսութեամբ, նշենք միայն, որ «Պատմութիւն քաղաքին Յանույր»-ի բնագրի մանրակրկիտ ուսումնասիրութեամբ այլ եզրակացութեան է հանգեց-

<sup>20</sup> Ղ. Ալիշան. Ընդհանուր և պարագայ խո, Վենետիկ, 1873, էջ 127: Առաջին այս ենթադրութեանը հայտնի է Մ. Բրանն, հմտ. Տ. Գալուսեան, Մխիթար Անեցի Ղազարյանների և Մելլուրյանների մասին, «Երևան», N 4, 1972, էջ 75, ծան. 8:

<sup>21</sup> Տե՛ս Գ. Արզարյան, Մասնագրական կորույթներ, ՀՍՄՀ ԳԱ «Տեղեկագիր», N 1, 1964, էջ 75—77:

նում: Միանգամայն ակնհայտ է, որ խնդրո առարկա աշխատութիւնը ոչ թէ որնէ մեկի ինքնուրույն ստեղծագործութիւնն է, այլ տարրեր ազդեցութեան կատարված քաղաքացիութիւն՝ բնաբանացի և համառոտ ժողովնալ յայսմ վայրի, ինչպէս որ այդ մասին տեղեկացվում է աշխատութիւն վերնագրում: «Պատմութիւն քաղաքին Յանսյո-ի կազմող-հեղինակը օգտվել է ինչպէս Հովհաննես Գրասխանակերտցոյ, Մամվել Անեցոյ, Մատթեոս Ուսահայեցոյ (ավելի ճիշտ՝ Գրիգոր Նրեցից), այնպէս էլ Մխիթար Անեցոյ հետ ստեղծագործած Վարդան Արևելցոյ և Կիրակոս Գանձակեցոյ»<sup>22</sup>: Ահներն է, որ մեզ հետաքրքրող բնագիրը չի կարող պատկանել Մխիթար Անեցոյ գրչին և քաղաքացիութիւն է տարումն ազգայնոյ յետին դարուց, ինչպէս ժամանակին ենթադրում էր Ալիշանը<sup>23</sup>:

Մխիթար Անեցոյ նշանավոր ստեղծագործութիւնը Պատմութիւնն է, որի սկզբնական մասն է միայն, գծրախտարար, մեզ հասել: Այն 1879 թվականին Պետերբուրգում հրատարակեց անվանի Հայագետ Քերովըն Պատկանյանը՝ հուսալով թղի և զմեացորդն հանդիպեցիցի դասնել ումեր յաշտագրուի, քան զմեզ<sup>24</sup>: Գրտեականի հույսը առայժմ չի արդարացել, սակայն այսօր, առաջին հրատարակումից մեկ դար անց, հուշարձանի վերստին հրատարակութիւն և հանգամանայից հետազոտութիւն կարիքը շատ է զգացվում:

### ՄԻՔԱՐ ԱՆԵՏՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԲՈՎԱՆԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Մեզ հետաքրքրող տեղեկութիւնները Մխիթար Անեցոյ պատմական երկի բովանդակութիւն, կառուցվածքի և ժամանակագրական սահմանագծերի մասին քաղում ենք առաջարանից, ուր պատմիչն անզրազան՝ նում է այս հարցերին՝ զբոս կատարելոցն հրահանգից ի սովետական յեղանական, «Եւ ոյս, զի զմիտս ընթերցողացն և լսողացն առանել

<sup>22</sup> Մանրամասն տե՛ս հովելում, էջ 123—124:

<sup>23</sup> Ղ. Ալիշան, Ներսիս, էջ 111: «Պատմութիւն քաղաքին Յանսյո-ի, սակայն, քաղական ուշագրով և արժեքավոր է ազդեցութեան քաղաքացիութեան առումով, ուստի կարտահանարար համարելիք այն ևս հրատարակել իրրի հովելում:

<sup>24</sup> «Մխիթարայ Անեցոյ Պատմութիւն, Սկիզբն, զլուրս ԻՆ. Ի լուս տ՛ Քերովըն Պատկանյան, Պետերբուրգ, 1879, էջ Բ:

յաւժարագոյնս արասցէ և ի վարժումն մատենիս փութագոյնս և անյաւազս մղեսցէ՝:

Հեղինակը ծրագրել է Պատմութիւնը գրել. «Սղաժանակ տեղեկութեամբ թեանկալ յԱզգամայ Հետէ մինչ ի քնախն վերջի մամեանս՝ յաւազս Յովաննիսի թագաւորի: Եւ անտի լայն և տարած բանիս յընդարձակեալ մինչ ի Ռեթ թուականս՝: Պատմութիւնը, իրոք, սկսում է աստվածաշնչյան ծննդաբանութեամբ, և հայոց պատմութիւնը՝ նահապետների, արքաների ու կաթողիկոսների ցանկերով, հասցւում է մինչև պատմիչի ապրած ժամանակաշրջանը: Սակայն այս ամենը ամփոփված է մի քանի էջում, և Հեղինակը այն դիտում է սոսկ Պատմութեան առաջարան: Պարզորոշ ուրվագծւում է առաջարանի կառուցվածքը.

Առաջին գլուխ՝ մուտք, պատմութեան գրելու ծրագիր:

Երկրորդ գլուխ՝ խիստ համառոտ ժամանակագրական ցանկեր ու ազդեանքներ:

Յերրորդ գլուխ՝ «Թէ զինչ է պատմութիւն և կամ բանիք են, որ յայտնի են առ մեզ» (արժարժած խեղդիքներով հարում է առաջին գլխին):

Միտիթար Անեցու Պատմութեան առաջարանը Հեղինակի պատմագրական հայացքների շարագրման հետ միաժամանակ, հասակորեն որոշում է նաև աշխատութեան կառուցվածքն ու ժամանակագրական հիմնական ուղեկողները, իբրև հովելում ավանդելով պատմիչների արժեքավոր մի ցանկ: Ընդ որում Միտիթար Անեցին առաջարանը չի մացնում բուն Պատմութեան մեջ. «Եւ արդ՝ զսմարեցի զայսոցիկ զսմարումն յերիս պրակս... Առաջին պրակն սկսանի ի Պարոյրայ Հայկազեոյ՝ առաջին թագաւորէ Հայոց, մինչև ջՅովաննէս վերջին: Իսկ երկրորդն՝ ի Յովաննիսէ մինչև ի քահանայաւանայն տեառն Բարսղի: Եւ երրորդն՝ մինչև ի գերին զերուսաղէմ և յիս ազգաց Ծաւնգացն: Պատմութեան առաջին պրակն սկսում է այժմյան «Գ» գլխից՝ «Նախնի թագաւոր Հայոց Պարոյր ի Հայկազանցիս, իսկ մեզ հասած մասը ավարտւում է արարական արշավանքներին ու խալիֆներին նվիրված ցանձնակերտորդ գլխով: Այս պրակն անգամ ակնհայտորեն թերի է, կորած մասերից է Բաղրատունայց հարստութեան պատմութիւնը, որը խոստանում է գրել Հեղինակը. «Եւ իբրև կարի գովելի և ուղիղ կենաց զհեա եղեն (ակնարկում է Բաղրատունայց հարստութեան պատմութեանը):

1 Միտիթար Անեցի, Մատեն աշխարհավիչ հոգեհարսանաց, էջ 53 (Այսուհետ՝ Միտիթար Անեցի, Լոզում է ներքև հրատարակութիւնը):

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 61:

առևտրականներին—2. Մ.) դժարեանն ժառանգեցին անուսն և պատի՛ նըստն ի յաթոս նորա, ի վերայ բուր Հայոց, քաղաքիս ի Հայաստանեաց ի Շիրակ գաւառի, ի Շիրակաւանն աւանի, որպէս հանդիսնալ եմ գրել<sup>4</sup>:

Մխիթար Անեցու Պատմութեան հաշորդ պրակները պետք է արտաշուին Քաղաքատնայաց վերջին (ըստ Մխիթար Անեցու) արքա Հովհաննես-Սմբատի (1020—1041) քաղաքութեան տարիները և հաշորդող ժամանակաշրջանի պատմությունը, մինչև աշխատութեան գրութեան ժամանակը: Այս ժամանակահատվածի պատմությունն է, որ այսին և տարած բաները պետք է գրեր Մխիթար Անեցին, ինչպես խոստանում է իր մեկնաստիկն. «Արդ՝ ո՛ր պատուական հայր Գրիգորի է, գրեթէ զհարիւր և ետմաց մեծամեծ գործա խնդրէ քո պատուականութիւնդ՝ ի ժամանակաց անտի Յովհաննիսի, յետին և վերջնոյն Քաղաքատնեաց, մինչև ի ներկայս յայս, յորում եմս զնա ես<sup>5</sup>: Այս վկայութեանը տարակուսանք է հարուցում նախ այն աստիճով, որ Հովհաննես-Սմբատից մինչև Ռեթ (1193) թվականն ընկած ժամանակահատվածը՝ (1041—1193) ավելի է, քան 140 տարին: Տարակուսելի երկրորդ կետն այն է, որ Պատմութեան պատմիրատուն՝ Հաղիմի վանքի վանահայր Գրիգորը, մահացել էր արդեն 1188 թ.<sup>6</sup>, այնինչ Մխիթար Անեցին այս մասին ոչ մի ակնարկ չուելի և նրան է դիմում իրրև կենդանի մարդու կարելի է ենթադրել, որ Մխիթար Անեցին Պատմություն գրելու պատվերը ստացել է 1180-ական թվականների սկզբին, երբ, իրոք, մտա 140 տարի էր անցել Հովհաննես-Սմբատի մահից (1041 թ.), և հենց այդ ժամանակ էլ գրել է առաջարանի խնդրոս առարկա սողեցրը: Մակայն, քերես, նա Պատմութեան վրա աշխատել է շուրջ մեկ տասնամյակ և ավարտել է այն պատմիրատուի մահից հետո՝ 1193 թվականին:

Հեղինակի վկայութեամբ, Պատմութեան երկրորդ պրակը ընդգրկում էր հայոց պատմությունը Հովհաննես-Սմբատից մինչև յի քահանայա-

<sup>4</sup> Եւոյն տեղում, էջ 58:

<sup>5</sup> Եւոյն տեղում, էջ 61:

<sup>6</sup> Հակոբակ այն կարծիքի, որ Գրիգոր վանահայրը մահացել է 1188 թ. (տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 159, 163, հմտ. 2. Անուստան, Հայոց անկախութեան քառասուն, հ. Ա, Օրեան, 1947, էջ 561) այժմ պարզված է, որ նա վանական է 1188 թ. 56-ն 2. Պարտոյան, Հայոց վանքի արձանագրութիւնները, «Քաղաքագիտ», № 11—12, 1937, էջ 268 և Ն. Տեր-Մկնտչյան, Հայոց վանքի արձանագրութիւնների ամբիւ, «Եւրոպայի», № 1, 1938, էջ 42—43, հմտ. 6. Տեր-Մկնտչյանի հոդվածը եւոյն թվականի № 12-ում, էջ 62:

նալն անառն Քարսղիս: Այդ, ո՞վ է այս Քարսեղը: Ալիշանի կարծիքով, սա Անիի Քարսեղ արքեպիսկոպոսն է թի կէս ժԲ դարում: Այս վերջինիս կենսագրությունը բավական լավ ծանոթ է: Հայտնի է, որ նա անընդհատ ձգտում էր կաթողիկոսություն, սակայն այդ տեսչուսով հիշվում է միայն Անիի և շրջակայքի արձանագրություններում (առաջին անգամ՝ 1173 թ., երբ վախճանվել էր Ներսես Շնորհալին): Նա, սովորաբար, կաթողիկոս էր հայտարարվում այն տարիներին, երբ մահանում էր Կիլիկիայում նստող օրինական հայրապետը, ինչպես նաև 1193 և հատկապես 1195 թվականին: Ալիշանի ենթադրությունն անառնիկ է կլիներ, եթե Մխիթար Անեցի Քարսեղին հիշեր իր կազմած հայոց կաթողիկոսների ցանկում: Մյուս պատճառը, որ ստիպում է հրատարակել Ալիշանի ենթադրությունից, այն է, որ Քարսեղի կաթողիկոս հիշվելու ամենավաղ տարին անգամ՝ 1173-ը, չէր կարող լինել այն սահմանագիծը, որով պետք է սահմանադրվեին Պատմության երկրորդ և երրորդ պրակները: Այս զեպքում Մխիթար Անեցու աշխատության մեկուկես հարյուրամյակի պատմությունը ընդգրկող մասը կբաժանվեր երկու խիստ անհավասար մասերի:

Հավանական է, որ հիշատակվող Քարսեղը ժԱ դարի վերջի և ժԲ դարի սկզբի հայոց կաթողիկոս Քարսեղ Ա Անեցին է: Վերջինս թեև իրավ կաթողիկոս է դարձել Գրիգոր Բ Վկայասների մահից հետո՝ 1105 թվականին, սակայն ձեռնադրվել էր արդեն 1081 թվականին<sup>7</sup>: Հեռանալով Մամվել Անեցու, այս տարվանից է Քարսեղի կաթողիկոսությունը հանձնվում նաև Մխիթար Անեցիին<sup>8</sup>: Հետևաբար, Պատմության երկրորդ պրակում ներկայացվել է մոտ 40 տարվա պատմական իրադեպություն: Պատմությունը ավարտին է հասցվել ժԲ դարի վերջի մեծ արևազանց գառն երկու իրադարձությունների՝ Երուսաղեմի անկում (1187 թ.) և խաչակրաց երրորդ արշավանքի (1189—1192 թթ.) արձանագրմամբ:

Մխիթար Անեցու Պատմության մեզ հասած մասը ընդհանուր առմամբ կանոնավոր կառուցվածք ունի, պահպանվում է ժամանակաշրջաններին հետևողականությունը: Հեղինակը միայն անցողիկ ակնարկ է

7 Ղ. Ալիշան, Հայագրություն, Կ. Ա, էջ 200:

8 ՏՃ՝ Ն. Ալիշան, Երուսաղեմի անկումը, Վրենա, 1936, էջ 67—69, 295—297, ևսն՝ 2: Անառնի, Հայոց անկախության պատմություն, Կ. Ա, էջ 298:

9 Մ. Մամուկյան, Աղբյուրագրություն, Կ. Ա, Կոստանդնուպոլիս, 1922, էջ 202—20:

10 Հ. Անառնի, Հայոց անկախության պատմություն, Կ. Ա, էջ 293—294:

11 Հիմա. Մխիթար Անեցու կաթողիկոսական ցանկի ավելանք, էջ 83—89:

նևտել Հայոց Հեռավոր անցյալի պատմության վրա, շարագրելով այն  
 առանձին գրվազներով, լսկ երբեմն հանգամանքն լուսաբանելով որոշ  
 իրադարձություններ: Մխիթար Անեցին երբեմն, սակայն, վերստին է  
 անդրադառնում արդեն ավանդածին և ժամանակային թուխըներ կատա-  
 րում: Այսպես, շ՛ք զլիսում շարագրելով Հայոց նահապետների և թագա-  
 վորների ժամանակագրությունը մինչև Քաղրատունիներ, շ՛ք զլիսում  
 Արշակունիներին Հիշատակելու ասիթով դարձյալ բերում է Հայ և պար-  
 թև Արշակունիների զուգահեռ ցանկեր: Ե՛տ զլուսը թն նվիրված է  
 Մեքաա Քաղրատունուն վերաբերող զրույցներին, այդուհանդերձ հեղի-  
 նակը մեշ է բերում պարսից գահակալների ցանկը: Երբեմն էլ ավանդ-  
 ված ցանկերի ավյալները լիովին շն համապատասխանում միմյանց:  
 Այա ամենի հետևանքով Մխիթար Անեցին լի կարողացել խուսափել ընդ-  
 հանրապես քաղաքական երկերին բնորոշ թերություններից՝ հեղինա-  
 կի անցումները մի թեմայից ու ժամանակաշրջանից մյուսին ու բուր  
 դեպքերում նև սահուն ու պատշառաբանված, դեպքերն ու իրադարձու-  
 թյունները երբեմն շարագրվում են առանց բնարություն ու կանոնավոր-  
 ման: Պատմիչի կիրառած լեզվական հնարներն ու բարեխառնումներն  
 իրենց հերթին ընդգծում են լեզվի արհեստականությունը:

Մխիթար Անեցու Պատմությանը ժանոթ պատմիչների վկայություն-  
 ներն և անգամ աշխատության վերնագիրը՝ ԵՄատեան աշխարհավէոյ  
 հանդիսարանաց, խոսում են երկասիրության պատկանելի ծավալային  
 ընդգրկման մասին. այն զուրս է նկել զուս Հայոց պատմության շրջա-  
 նակներից և որոշ իրադարձություններ ընդգրկել վրաց, պարսից, ինչ-  
 պես նաև արաբների ու սելջուկների պատմությունից:

Այսպես օրինակ, հայտնի է, որ Մտեփանու Օրբելյանը, իր տունի  
 պատմությունն և Վրաստանում ծավալած գործունեությունը շարագրելիս,  
 պրպտել է վրացական և հայկական աղբյուրները. շ՛ք այց զոր գտաք ի  
 հայալիզու զիրս սակա ինչ լիշատակ՝ դիցուք, ևս և զվախան կատա-  
 րածի նոցա զոր հաստեալու ծանոյց մեզ գեղեցիկ Պատմութիւնն Մխի-  
 րաւայ Անեցոյ<sup>12</sup>, Վարդան Արեւելցին ևս հաստատում է, որ Մխիթար  
 Անեցու Պատմությունը ընդարձակ տեղեկություններ է պարունակել վրաց  
 պատմության վերաբերյալ: Իր երկասիրության վրաց թագավորներին  
 վերաբերող ԵՄ զլուսը նա գրել է շքա Մխիթարայ Երիցու ասիցն<sup>13</sup>:

<sup>12</sup> Մտեփանու Օրբելյան, Պատմութիւն նահանգն Սխազտ, էշ 272—273:

<sup>13</sup> Էշտարումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, էշ 92:

Սեչուեկների մասին Վահրամ պատմագրի տեղեկությունները մեշ բերելուց հետո նա հարկ է համարել վկայակոչել նաև այն, ինչ գրել է «Պատմական երկն Մխիթար Անեցի», որոյ յիշատակն ի գիրս կենացա<sup>14</sup>:

Փաստ է, որ Մխիթար Անեցու Պատմությունն իր ընդգրկած պատմական իրականության ծավալով, ընդարձակ ու արժեքավոր տեղեկություններով վստահել է մեր միջնադարյան պատմիչների հարգանքը և թեկուզ հատվածական՝ այսօր էլ արժեքավոր սկզբնաղբյուր է:

### ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԹՅՈՒՐՆԵՐԸ

Մխիթար Անեցու Պատմության մեզ հասած հատվածը, հիմնված լինելով նախորդ հեղինակների երկերի վրա, պատմաբանասիրական և բնագրագիտական մեծ արժեք է ներկայացնում:

Հեղինակը բաշտանոթ է ոչ միայն հայկական պատմական գրականությանը, այլև վաղ շրջանի հայ տեսական մարի հիմնական հուշարձաններին, հաջողությամբ օգտվում է պատմական երանդ ունեցող գաղանաբանական գրականությունից: Աղբյուրների օգտագործման լավ մշակված համակարգի, աղբյուրների բարեխիղճ հիշատակության շնորհիվ, նրա Պատմության միջոցով ստուգվում, շլտվում և հաստատվում են մեր որոշ պատմիչների երկերի բնագրերը: Պատմության այն հատվածները, որոնք գրվել են նախորդ պատմիչների երկերի օգտագործմամբ, արժեքավոր են նրանով, որ հաճախ այդ պատմական երկերի ուղեի նախնական վիճակն են արտացոլում, քան հայտնի է այդ երկերի մեզ հասած ձևագրերից: Երբեմն էլ, սակայն, այդ աղբյուրների անազարտ հատվածների հիման վրա սրբագրվում են Մխիթար Անեցու Պատմության խաթարված մասերը: Վերահիշյալ հանգամանքների շնորհիվ Պատմության մեզ հասած հատվածը ծանրակշիռ արժեք ու կարևորություն է ձևաք բերում, և ուշադրով փաստեր է մտաակաբարում նախորդ ու հետագա պատմիչների՝ Մովսես Խորենացու, Մերձոսի, Հովհաննես Դրասխանակերացու, Սամվել Անեցու, Մխիթար Այրիվանեցու, Վարդան Արևելցու և այլոց երկերի փոխկապակցության և բնագրական առնչակցությունների հարցերը քննելիս:

Որոշ վերապահությամբ կարելի է ասել, որ իր օգտագործած աղբյուրների ցանկը հեղինակը հազորում է շոք գլխի վերջում, «Արդ՝ նախ ասացին, թէ ա՛յք պատմագիրք ծանաթք մեզ և գրացիքս: Այստեղ

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 24:

որոշակի հետևողականութիւնը հիշատակվում են. նախ՝ վաղ քրիստոնէական պատմիչները՝ Յովսէփոս Կեսարացի, Սոկրատ Սքուսատիկոս, և այլա՝ գրեթէ բոլոր հայ պատմիչները: Սակայն այն ավելի շուտ Մխիթար Անեցուն ծանօթ պատմութիւնների ցանկն է, քան այն աղբյուրների ցուցակը, որոնցից նա օգտվում է Պատմութիւնը շարագրելիս: Այս ցանկը լրիվ չի ընդգրկում նույնիսկ այն աղբյուրները, որոնք նա հիշատակում է շարագրանքի ընթացքում: Աղբյուրների մասին հաղորդելիս Մխիթար Անեցին, ընդհանրապէս, շատ բարեխիղճ է, հաճախ է ընթերցողին հողմնորոշում դեպի այս կամ այն պատմական երկը:

Մխիթար Անեցու մեզ հասած համավածի վրա ամենախոր դրոշմ քողել է Մովսէս Խորենացու Պատմութիւնը: Վերջինիս հետքերը նշմարելի են Մխիթար Անեցու Պատմութեան մեզ հասած զուտների մեծ մասում. հեղինակի համար այն հիմնական աղբյուրն է հայոց պատմութիւնը Պարոյր Հայկազնից Ճինշի Արշակունյաց բարձումը շարագրելիս: Խորենացու Պատմութեանը դիմելիս Մխիթար Անեցին գրեթէ միշտ հիշում է. «Մարգէս և առ ընդ ընդ պատմող Մովսէս»<sup>1</sup>, «Մարտին իմաստուն Մովսէս այսպէս պատմէ»<sup>2</sup> և այլն: Թգտագործման եղանակը, որին դիմում է Մխիթար Անեցին, խիստ ձկուն է: Այն երբեմն բառացի բազազրութիւն է, մերթ՝ Խորենացու պատումի ազատ վերաշարագրանքը, մերթ էլ՝ երկուսի խառնուրդը: Վերոհիշյալ եղանակներից որեւէ մեկի կիրառութիւնը թելադրված է եղել շարագրված նյութի առանձնահատկութիւններով և հեղինակի նպատակադրումով: Այսպէս, հեղինակը առաջին եղանակին դիմում է ենթադրյալ վավերագրերի՝ Արդարի, Տիրերխոսի, Քրիստոսի թղթակցութիւնը ներկայացնելիս: Այս դեպքում Մխիթար Անեցին միայն աննշան կրճատումներ է կատարել, իսկ առկա փոքրիկ տարբերութիւնները գրեթէ առանց բացատրութեան վկայված են Խորենացու Պատմութեան ձեռագրերի տարբերակներում: Մխիթար Անեցու Պատմութիւնը երբեմն ավելի հարազատորեն է պահպանել Մովսէս Խորենացու Պատմութեան սկզբնագիրը, քան մեզ հասած որոշ ձեռագրերը<sup>3</sup>:

<sup>1</sup> Մխիթար Անեցի, էջ 74:

<sup>2</sup> Նախ անգամ, էջ 78:

<sup>3</sup> Այսպէս, Մխիթար Անեցու Պատմութեան այն 16 թաղթում, որը վերնագրված է «Հին անուանք Բազատանիս, հիշվում են 2 անուս՝ Եղնուս և Մարիս, որոնք լինն Խորենացու Պատմութեան ընդունված բնագրում: Ք. Պատկանյանն այս անունները վրա հարցազան եղան է զրել, սակայն զրանց առկայութեան Խորենացու Պատմութեան ձեռագրում, այն էլ մի բանի տարբերակներով (Մովսէս Խորենացի, Պատմութեան Հայոց, Տփղիս, 1913, էջ 195) ապացույց է. որ այս անունները եղել են այն ձեռագրերում, որոնցից

Մխիթար Անեցիին մտաբերից ծանոթ է եղել նաև Ղազար Փարպեցու երկատիրութեանը. «Ժառարս սոցա, որպէս Պատմութեանն իրում սկիզբն զնէ Ղազարիկ պատմագիր, իրբ զհնացեալ և որձ՝ յերկուս պատանեցաւ Թագաւորութիւնս Հայոցս»:

Ոչազարակ է Սերենոսի և նրա Պատմութեան հիշատակութիւնը պատմիչներին ցանկում՝ «Եւ Սերենոս, որ Հերակլիին էս», որով վկայուած են մեզ հասած այդ կարևոր պատմական աշխատութեան անունն ու հեղինակը: Երկու Պատմութիւններին հարաբերակցութեան բացահայտումը, անշուշտ, մեծ հետաքրքրութիւն կներկայացնէր, սակայն, ցավոք, այն հատվածը, որտեղ պետք է արտահայտուէր երկու երկերի ազդեցք, փոքր է, քննարկներ երկուսուկէս չէ: Քնն Մխիթար Անեցու Պատմութեան առաջին հրատարակիչին իրեն հիշյալ հատվածի ազդեցութեամբ մատնանշում է միայն Սամվել Անեցու և Սերենոսի Պատմութիւնները, քննարկան համեմատութիւնը, սակայն, վկայում է, որ Մխիթար Անեցին մեծապէս օգտվել է նաև Հովհաննէս Գրաստանակերտցու Պատմութիւնից: Այս հատվածներում պատմագող զեպները թեև ավանդում են մեր պատմիչներից շատերը, բայց նրանց հիմնական ազդեցութեամբ Սերենոսի Պատմութիւնն է, որի տեղեկութիւններին մշտնադարձ կերպով միայն նոր մանրամասներ են հավելում: Համեմատագող հատվածները հետաքրքիր պատկեր են պարզում:

Մխիթար Անեցու Պատմութեան հատվածը հիմնականում համեմատյալ հենով Սերենոսի, Հովհաննէս Գրաստանակերտցու, Սամվել Անեցու համապատասխան հատվածներին, միաժամանակ չի նույնանում և ոչ մեկի հետ: Տեղեկութեանը հավաստիութիւն հազարգիշու նպատակով Մխիթար Անեցին շնունտ է ճշգրտաբար որոշել ժամանակը և զիմում է ժամանակագրական հարցերում նրա համար ամենամեծ հեղինակութիւն հանդիսացող Սամվել Անեցու Պատմութեանը: Նրա հյուսած ժամանակագրութիւնը, իհարկէ, չի է հակասութիւններով ու սխալներով: Եթէ Սամվել Անեցին պարսից ևսորով Թագավորի գահատարիները նշելու կապակցութեամբ հիշում է նաև Մմբատին ու նրա մեծագործութիւնները, ապա

պտղել է Մխիթար Անեցին: Վկայելուով Մխիթար Անեցուն՝ աշտարակի մի նշքում Մովսէս Խորենացու Պատմութեան քննարկում ժամանակին առաջարկել է Գ. Տեր-Մկրտչուկը (Գ. Տեր-Մկրտչյան, Հայագրական ուսումնասիրութիւններ, հ. Ա, Երևան, 1928, էջ 42, ծան. 2):

<sup>1</sup> Մխիթար Անեցի, էջ 80, Հմմտ. Ղազար Փարպեցի, Պատմութեան Հայոց և Բույժ առ Վանս Մամիկոնեան, Տփղիս, 1804, էջ 1:

<sup>2</sup> Մխիթար Անեցի, էջ 72:

2-974  
A  
69853



Սկիզբ

Հովհաննես Գրեկորյան-  
Վերնիշի

Սահակ Առաքյալ

Պիտրոս Առաքյալ

Իսկ այս և իսկ իսկ  
յայտնվել Կաթողիկոսի Պապ-  
րոսոսի/ Բարձրադաստից յա-  
ննոս հարցման արքային  
այս և իսկ զմարդկան-  
քին հարցին Վրդապետ (էջ  
95)

հարցման Կաթողիկոսի  
և Բարձրադաստիցի Պա-  
պի/ աստակոց Սկիզբ  
Իսկ Բարձրադաստից Բարձր  
և սեփարիկ ժառանգ յա-  
րարե ընդվիճ յարց թշ-  
նամար հարցաւ և արհարար  
մրցմամբ զսակոց վրան-  
դեպ զքնաւ Կաթողիկոս-  
ոս և իսկ յայնի հմա  
կարողաներ (էջ 96 ար-  
ժանաւ) հարցմամբ յայն  
իմ Կաթողիկոսի Բարձր  
յարց հարցաւ և յարմար  
մտմար զնկարգան ան-  
տարբար զևա զտարտ-  
արեալ՝ այլ էմա և  
զմարդկանքին Վրդա-  
պետ (էջ 97)

ԵՅԱ (ԸՂ) Տի Բարձր-  
ուս Գրեկորյանց և Վր-  
դի յմարդկանց՝ անա թի:  
ԵՅԸ Կ Գրեկոսի մարտի  
անա Կ  
ԵՂԸ: (ԿԿ) Գարեգի  
հարցմ անա Լ: Աստու-  
սը Բարձրա Բարձրադաստի  
բարձր ժառանգ յարցար-  
էր՝ աստուի յարմարմար  
ուն թրանքիս հարցմա  
կան որոյ զտարտուս  
զմարտ, այլ հմա զ-  
մարդկանքին Վրդապետ  
(էջ 76—77)

և Բարձրադաստիցի Պա-  
պից հարցմի և Հարմար  
Սարգիսի և Կարթագմա-  
րանի Հարցմ Բարձրադաստի  
Բարձրադաստի և իսկ Հարց-  
մի, և ԵՂԸ անա և իսկ  
էլ Գրեկոսի, Սկիզբ  
Իսկ Բարձրադաստից Բարձր  
և սեփարիկ ժառանգ յա-  
րարե ընդվիճ թշնամար  
հարցմա Գարեգի Բարձր-  
արի, ընդ որ յայն իմ  
Կաթողիկոսի արքայ և ընդ  
այլ յարմար զմարտից և  
զմարդկանքին Վրդապետ  
այլ էմա (էջ 91)

- 6 Սկիզբ, Գարեգից, արձանագրութեամբ Կ. Բարձրադաստի, Երևան, 1973:
- 7 Հովհաննես Գրեկորյանի Կաթողիկոսի Հարցմ, ՔՔՔԿ, 1972:
- 8 Կաթողի Առաքյալի Հարցմանց և Գրեկոսի Կաթողիկոսի, Կաթողիկոսյան, 1880:

Մխիթարը, հնեգիւղ ալս պատահական ժանրամասի վրա, լիակատար վաստակով Սմբատի մարդպան գառնալու թգանանն է հալատարարում ԵՂԶ-ն (596 թ.)։ Ակեհրն է, որ Մխիթար Անեցին անմիջականորեն չի օգտվում Սերնոսից, այլ գերազատությունը ապիա է Հովհաննես Գրասխանակերացուն, որը, իրեն յուրահատուկ սեռով, ընդարձակում է Սերնոսի կցկաուր անգնկությունները։ Նույն պատկերն է նաև հաջորդ հատվածում.

**Աղբն**

**Հովհաննես Գրասխանակերացի**

**Միջոց Անգի**

Կայն յաշխարհն յայն-  
մի արցն զերկայք ի Հա-  
լատան կրկն, և նրա-  
տուցնայ առ սարսառով ա-  
նպաստն մեծի, որ ի  
Քուրաասանի և ի Գլի-  
հասան կողմանէ. ըզլե-  
զու իսրեանց ժուարեայ և  
զգրութիւն նուարեայք և  
կարգ բաճանայութեանն  
զոհասուցք.

...Բայց ի վերայ չբնո-  
տելիցն մարք լոյս մեծ,  
նաստառլին ի հաստա և  
նուանլին զգրութիւն և  
զնկու, և հաստառլին ի  
կարգ բաճանայութեան յաշ-  
խարհի անց նրկց ամն ի  
նոցանէ, որ անուանեայ  
կուլը Արէլը (էջ 97)

Իսկ Սմբատայ կրթնայ  
հասնայ յաշխարհն յայն՝  
զտանէ անց զերկայ ար-  
չքս ի Հալատանեայք և  
չնակնցուցեայք ի Քաւեա-  
տան կողմանէ մեծի անա-  
պատին, առ Սարսառան  
անտանի. զնկու իսրեանց  
ժուարեայ և զգրութիւն  
նուարեայ յայն։ Մոց և  
անեայ զԱմբատ՝ յալա-  
իմ իսրախ յիւնիւն, և ի  
հրամանէ նորոն զարնույ  
արակերտույ քառ հայն-  
լին Հաղտուցս սիզարայիցն  
զնկուն նորակին և ու-  
տուայ զգրութիւն հայերեն՝  
հաստառլին ի հաստառ  
նուարեայ զնրկց ամն ի նո-  
ցանց իսկ՝ Արէլ անուն,  
զնպահուցու նոցա հրա-  
մայէ կայուցանել մեծի  
հայրազտեմն մերոյ Մով-  
սէսի (էջ 98—79)

Որոյ կրթնայ անց՝ զը-  
տանէ արց մի գերեայ ի  
Հայք և շնակնցուցեայ ի  
Քաւեառան կողմանէ, որ  
Սագաստանն անտանի.  
ժուարեայ զնկու և զգր-  
հայերէն. Մոց անեայ  
զԱմբատ՝ ուրախ յիւնիւ-  
նու նա նորով զարնույ  
զնկու և զգր հայերէն ի  
մեծ Արէլի կրթույ և  
այայ զնոյն առաջնորդ նո-  
ցա։ Ու կարեօրուս յնայ  
մեռնարեայ Մովսէսի զԱ-  
րէլը (էջ 91)

Որոյ ժանրամասներ՝ Սագաստանի անգաղությունը, Արէլի մեռ-  
նադրվելը Մովսէս կաթողիկոսի կողմից, ակնհայտորեն վերցված են  
Հովհաննես Գրասխանակերացու Պատմությունից։ Պահպանելով շափր և  
հավատարիմ իր նպատակադրմանը՝ «Սղաժանակ անգնկութեամբ թնա-  
նայ», Մխիթարը զեն է նկատում այն բառակազմակերպումները, որոնք ժանրա-

բնեւեւու էին Պատմութեան շարագրանքը, գերագառութիւնը աւելով ալեւ-  
լի հասկանալի և բնտանի գրաբարին (սյուէտ իմն խրախ լինէինս—  
ուրախ լինէինս, քրատ հայերէն հագագացս սիւղաբայիցն զլեզուն նոր-  
դէին և ուսեալ զգագութիւնս—սնորոզէ գարձեալ զլեզուն և զգիր հայերէնս):

Քերթած համեմատութիւններից այն ապավորութիւնը կարող է  
ստացվել, որ Մխիթար Անեցին անմիջականորեն ծանոթ չէ Սերետսի  
Պատմութեանը և նրանից տղամում է՝ միայն միշնորդաբար: Գնորդ Ար-  
գարյանի կարծիքով, Մխիթար Անեցին իր տեղեկութիւնները քաղել է  
Սերետսի երկը համառոտագներից, այդ թվում նաև Ասողիկից: Այս կա-  
պակցութեամբ ուսումնասիրողը հետևյալն է գրում. «Մմբատին նմիթված  
պիտում Անեցին մի բանի այլ անդեկութիւններ հաղորդելիս նույնպես  
ներկա «Սերետսը» ձևորին շունենալով, սղտվել է ուրիշ գործուրներէց,  
մասնավորապես Ասողիկից: Քանի որ Ասողիկն ինքն է քննվող հատվածն  
արտագրել ներկա «Սերետսից», իսկ Մխիթար Անեցին էլ հարագաու-  
թեամբ արտագրել է Ասողիկին, աշտմ դժվար է միանգամից որոշել աղ-  
բայուրների անմիջական ազդակցութիւնը: Ուստի ներկայացնենք միայն  
նրանց տարբերող բառերն ու արտահայտութիւնները»<sup>9</sup>: Այնուհետև Ար-  
գարյանը համեմատել է նշված մատենագիրներից իննական արտահայ-  
տութիւն, ընդգծելով Ասողիկի և Մխիթար Անեցու նմանվող տեղերը<sup>10</sup>, և

<sup>9</sup> Կ. Արգարյան, Գործնալ Սերետսի մասին, «Քանդիկ Մատենագրական», № 19,  
Երևան, 1971, էջ 424:

<sup>10</sup> Նույն անգում, էջ 424—425: Համեմատող արտահայտութիւններից հինգերոր-  
դում հնգիւնակը հիշա չի վկայուելու Մխիթար Անեցու աշխատութեան համապատասխան  
տեղերը:

Սերետս	Ասողիկ	Մխիթար Անեցի
Շնորհապանայ զորն ա- մենայն՝ սպանին զՆաւ- տարիմս արքային	Շնց որ զայրացեալ զո- րացն սպանին զհիշախ- պանս:	Շնց որ զայրացեալ Յը- մրզի ստառլ փոշտիպանս

Նախորդ երկու հնգիւնակներն էլ խոսում են այն մասին, որ ապստամբ զորքերը  
սպանել են արքայի ուղարկած մարզիւնց, իսկ Մխիթար Անեցու Պատմութեանց մնչ-  
քերթած հատվածում զե խոսում է նրանց ստառելու մասին: Մխիթար Անեցու համա-  
պատասխան առջ աւագիսն է. «Եսկ զայրուն սպանեալ զփոշտիպանս»:

Յոթերորդ արտահայտութեան մեջ վերջին երկու հնգիւնակների երկերից համա-  
պատասխանութիւնները սխալ են մեջբերված:

Սերետս	Ասողիկ	Մխիթար Անեցի
Ծնա լուր ազազակն ...աւ Յրմզի	զոր կուեալ Յրմզի միշար. զոր լուեալ Յրմզի	զոր կուեալ Յրմզի զոր լուեալ Յրմզի

եզրակացրել՝ քինչպես անսնում ենք, Միխիթաք Անեցիկն օգտվել է ոչ թե ներկա «Մերենասից», այլ՝ Ասողիկից»<sup>1)</sup>։

Սակայն բնագրերի համեմատության այն եզրանակը, որին դիմել է զիտեակահանը, ցտվոք, չի կարող հնարաձորություն ընկեակել՝ պարզելու համեմատվող հատվածների իրական հորաբերակցությունը։ Ենզրո առարկա հատվածների ամբողջական համեմատությունը երևան է բերում նաև նկատելի տարբերություններ ու շեղումներ։

## Ասողիկ

Ի սորա ժամանակս էր վահրամ ոմն Մեհեանդ՝ իշխան արևելից կողման օշխարհին Պարսից, որ հարկանէր քաչութեամբ զզօրսն Քեռայաց, և բնութեամբ ունէր զԲահդ և դամենայն երկիրն Քուշանաց մինչև յայնկոյս զեռոյն մեծի, որ կոչի Վեհոտ, և մինչև ցտեղին, որ կոչի Գաւրուն։ Այս վահրամ պատերազմեալ ընդ արքային Մազքթաց՝ եհար զբազմութիւն զօրացն և սպան զթագաւորն և յափշտակեաց զզանևս թագաւորութեանն. և սուղ ինչ աւարամասն առաքեաց ի մեծամեծ ընկիցն թագաւորին Որմզդի. և զայլսն զօրացն քաշխեաց։

Իսկ թագաւորն առեալ զայն՝ աւել ցասմամբ։

## Միխիթաք Անեցի

Վահրամ Մեհեանդակ, իշխան արևելից, յաւուրս Որմզդի, որդոյն ետատօվանոզ ետարովու Մա հարկանէլ քաչութեամբ զզաւրն Քեռայաց և բնութեամբ ունէր զերկիրն Քուշանաց և զմայրաքաղաք Եոցին զԲայխ, մինչև յայնկոյս Վեհոտ զեռոյն։ Այլ և զՄազքթաց զաւրսն կտտորեաց և զթագաւորն սպան և զանբաւ աւարն զաւրացն իւր քաշխէր և սակաւ ինչ Որմզդի առաքէր։ Ընդ որ զայրացեալ Որմզդի առաքէլ փուշտփպան՝ ժողովել ի զաւրացն զաւարն։ Իսկ զաւրուն սպանեալ զփուշտփպանն, թագաւորնցոյցին զՎահրամ Մեհեանդակ, զոր լուեալ Որմզդի փախստական լինի և ի զաւրացն

1) Եւլյժ անգլոմ, էջ 425։

սէնթրիքն առանկ մեծագոյն, և  
զնշանն ի պատառոյս ծանեայ-  
լայնչափ մեծամեծ գանձուց զա՞յս  
միայն բնրիք յարբունիսս: Ին-  
հրամայեաց փշտիպանացն՝ եր-  
թալ ծոզովել զգանձան ի զօրացն:

Ընդ որ զայրացեալ զօրացն՝  
սպանին զփշտիպանան և թագա-  
տրեցուցին զՎահրամ և միաբա-  
նութեամբ դիմեցին յԱսորեստան՝  
սպանանել զՈրմիզդ. զոր լուեալ  
Որմզդի՝ փախչել կամելով, և ան-  
ցեալ ընդ գետն Դելաթ ընդ զսմն՝  
ի Վեհլաւաս: Այլ խորհուրդ ա-  
րարեալ խորհին արանցն և հա-  
մահարզացն և փշտիպանաց՝  
սպանին զՈրմիզդ և նստուցին  
թագաւոր զԵսորով սրդի նորին ի  
վերայ աշխարհին Պարսից: (Էջ  
112—113)

Նմանությունը, որ նկատվում է երկու հատվածների առաջին տո-  
ղնում, արդյունք է միևնույն աղբյուրի օգտագործման<sup>12</sup>: Միխիթար Անե-  
ցին, ինչպես և յուրաքանչյուր համառոտող, քաղել է Սերեոսից այնպես,  
ինչպես հարմար է թվացել: Այս համեմատությունը չի կարող հիմք առա-  
պնդելու, որ Միխիթար Անեցին քրատ առ բառ արտագրում է Ասողիկինս  
(դժվար չէ նկատել, որ Միխիթար Անեցու պատումը զգալիորեն ավելի հա-  
մառատ է, քան Ասողիկինը) և հետևյալ եզրակացությունը հանգելու. «Այս  
բառերին անմիջապես հաջորդող «Որոյ անկեալ առ Մուրիկս բառերը և  
նրանց հաջորդող ամբողջ հատվածը Եսորովի մասին՝ նույնպես քաղված  
են Ասողիկից: Եթե Անեցին մինչև այստեղ բառ առ բառ արտագրում է  
Ասողիկին՝ բնականաբար կիսատ մնացած միտքը նույնպես պետք է  
վերջացնեք դարձյալ Ասողիկին արտագրելով: Բայց Ասողիկի գրքից էլեք

<sup>12</sup> Որոչ արատաշատութուններ երկու պատմիչներն էլ վերցրել են Սերեոսից: Հմտ-  
ոքնյալ արևելիցս, Վարդանէ քաղութեամբ, քրականամբ ունելո, սմիչն յայնկոյառ  
և այլն:

մեռանի: Ապա զսրդի նորին գր-  
եսորով թագաւորեցուցին: (Էջ 92)

են կորսվել, այդ իսկ պատճառով էլ Մխիթար Անեցու արտագրած մասն աշմ մասն Ասողիկի գրքում չկա: Անեցու հասվածի միջոցով կարելի է վերականգնել Ասողիկի կորած մասը<sup>12</sup>: Անհասկանալի է, թե ինչու՞ պետք է կատարել այդ վերականգնումը, երբ դրա կարիքը չկա: Ասողիկի Պատմությունն այն հասվածով չի ընդհատվում, որը համեմատեցինք: Մինչև կորած էջերը կա ևս մեկ պարբերություն, որը բացարձակապես ոչ մի նմանություն չունի Մխիթար Անեցու Պատմության շարունակության հետ: Նորից վկայակոչենք Ասողիկի և Մխիթար Անեցու աշխատությունների բնագրերը:

### Ասողիկ

Եւ ոչ յնտ քաղում ատուրց Վահրամ ամենայն զօրօքն եկն եհաս փութանակի իրրև զխոյանայ արծուանց. իսկ խոսրով իւրայօրն փախստեայ անց ընդ գեան մեծ Գկլաթ: Եւ Վահրամ հասեալ էառ զտուն և զգանձն արքունի և նըստաւ ի զահոյս թագաւորին... (էջ 113)

Գծվար չէ տեսնել, որ Ասողիկի աշխատության բնագիրը Մխիթար Անեցու Պատմության որ հասվածով էլ փորձենք վերականգնել՝ անհամապատասխանություն կատարվի:

Մխիթար Անեցին հազարգում է նաև այնպիսի շատ հակիրճ տեղեկություններ, որոնք բացակայում են Հովհաննես Գրասխանակերացու, Ասողիկի, Սամվել Անեցու երկերում և առանց Սերնոսի Պատմության մասն ու գծվարըմբռնելի են:

Այսպես օրինակ.

### Սերնոս

Եւ եզն ընդ ատուրսն ընդ այնտօիկ խնդրեաց թագաւորն Յունաց ի թագաւորէն Պարսից զմարմին մեռելոյ առն այնօրիկ, որ կայր ի

### Մխիթար Անեցի

...որոյ անկեալ առ Մարիկ: Եւ նորա առաքեալ զար և զՄուշեղ Մամիկոնեան՝ սպուեանէ զՎահրամ և առնու ի խոսրովէ փոխանակ այնր զերկիրն Հայոց մինչև ցԿոզովիտ և ցՆուրաստան գետ, և զերկիրն Վրաց մինչև ցՏփլիս: (էջ 92)

### Մխիթար Անեցի

Եւ Մարիկ խնդրեալ ի խոսրովու զմարմին մեռելոյն, որ կայր ի գանձօ արքունի եզնայ յաւազան պղնձի, զոր Պարսիկն Կաւ խոս-

<sup>12</sup> Գ. Արզախան, Ելվ. օշն., էջ 435, թան. 25:

Շաւշ քաղաքի, ի գտնելու արքային, եղևալ ի պղնձի ատաղանի, զոր պարտիկն անուանէ Կաւ Խոսրով, և բրիտանեացն ասէն զԳանիկի մարգարէի: Եւ արքայն Խոսրով հրամայէ տալ նմա զխրեղիբն: ...Եւ եղև իբրև մեկնեցան ի քաղաքէն ասպարէզս երիս՝ յանկարծակի զտեղի առին շորիքն որ ի դեպակին. և ոչ ոք կարաց զնոսա շարմել ի տեղուղէն: Եւ զարձեալ անդրէն յանկարծակի բռնարար սուր սուր հարկանելով զամբոխն պատառեցին և զգունցն բռնութեամբ, և ընթացան անդրէն ի քաղաքն. և եղև իբրև մտին ընդ դուռն քաղաքին՝ անդրէն արձակեալ բղխեցին շուրջ դետոյն, և հոտէին շուրջն արատաքս լի յորձանաւք շուրջ իբրև զառաշխեն: (էջ 85—86)

Համեմատվող հատվածները, նիշտ է, նման են իրար միայն ընդհանուր գծերով, սակայն Մխիթար Անեցին Կալ Խոսրովին վերաբերող տեղեկությունները կարող էր քաղել միայն Սեբեոսի Պատմությունից, քանի որ այլուր դրանք բացակայում են: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Մխիթար Անեցին անմիջականորեն ծանոթ է եղել Սեբեոսի Պատմությանը, սակայն Հաճախ Սեբեոսի պատմածը հարստացրել է այլ աղբյուրներից քաղած տեղեկություններով:

Մխիթար Անեցին ներկայացնում է արարական արչավանքների և տիրապետության ժամանակաշրջանը՝ աղբյուր ունենալով հիմնականում Ղևոնդի Պատմությունը: Հաճախ է վկայակոչում Ղևոնդին և ավելին իմանալ ցանկացողներին հղում է նրա Պատմությունը. տարվա պատմել Ղևոնդի գրեալն, «զայս պատմել Ղևոնդ երէց»: Պատմության այս մասում ևս Մխիթար Անեցին հավատարիմ է իր սովորությանը՝ իր պատմածը հարստացնել այնպիսի մանրամասնություններով, որոնք բացա-

րով անուանէ և Հայք՝ զԳանիկէ մարգարէ: Եւ իբրև ածին շորիս և հանին ընդ դուռն ասպարէզս երեք, զարձան անդրէն շորիքն, ասոսթուր հարկանելով, և անդէն արձակեցան բղխումն շուրջ: (էջ 92)

կայում են բուն ազրյուրում, քաղելով գրանք մյուս պատմիչների երկն-  
 բից: Այսպես, պատմելով Գրիգոր Մամիկոնյանի մասին, Մխիթար Անե-  
 ցին հետևյալ միջանկյալ տեղեկությունն է հաղորդում. «Ի սորա ասուրս  
 նահատակնայ սուրբն Դաւիթ ի Դժինս<sup>14</sup>, Ղևոնդի Պատմությունում բա-  
 ցակալոց այս տեղեկությունը վերցված է Հովհաննես Գրասխանակերտ-  
 ցուց: Վերջինս, պատմելով Գրիգոր Մամիկոնյանի հրամանով պարսիկ  
 Սուրհանի մկրտվելու և Դաժիթ անունը ստանալու մասին, ավելացնում  
 է. «որ զկնի ամաց իսկ ի Դժին քաղաքի բնկալաւ զմարտիրոսական  
 պատկէս<sup>15</sup>, եթե Ղևոնդը պատմում է արար Մահմեա զբազմարի կողմից  
 բազում ամրոցների առման մասին, ապա Մխիթարը նրան է վերագրում  
 նաև Սևանի առումը. «Մա արձակեաց զծովն Գեղամայ և ասար առ զգաղ-  
 փեալան ի նմաս<sup>16</sup>, ազրյուր ունենալով Հովհաննես Գրասխանակերտցու  
 Պատմությունը: Մխիթար Անեցին երբեմն տեղեկությունը հյուսում է և՛  
 Ղևոնդի, և՛ Հովհաննես Գրասխանակերտցու տվյալների հիման վրա:  
 Երկու պատմիչներն էլ հիմնականում համերաշխ են ս. Գրիգոր եկեղեցու  
 առման մասին պատմելիս<sup>17</sup>, սակայն եթե Ղևոնդի պատմածից այն  
 սուպադրությունն է ստացվում, թե իսոյքը մի քանի էջ առաջ հիշատակ-  
 ված՝ Ներսես Շինողի կառուցած ա. Գրիգորի մասին է, ապա Հովհաննես  
 Գրասխանակերտցին այն տեղադրում է Բագրևանդի Բազուան գյուղում:  
 Եթե, քառ Ղևոնդի, ս. Գրիգորի ավերումը կատարվել է Մահմեաի հրա-  
 մանով, ապա Հովհաննես Գրասխանակերտցին այն համարում է Սելաթի  
 գործը: Մխիթար Անեցին, ընթանալով հակասությունները հարթելու և  
 բոլոր տեղեկություններն ի մի բերելու ուղիով, կազմել է հետևյալ տեղե-  
 կությունը. «Այս Մահմեա անիծեալ ետ հրաման զարացն, որ տերեղին  
 զՔաղսան և սպանին զսուրբա, որպէս պատմէ Ղևոնդի գրեալն<sup>18</sup>, Այս  
 եղանակով հյուսված տեղեկությունը կարող է տևա՞ծ թյուրիմացություն  
 տեղիք սալ, քանի որ բառացի հասկանալով Մխիթար Անեցուն և Բա-  
 զուանի ս. Գրիգոր եկեղեցու ավերումը փնարելով Ղևոնդի Պատմությու-  
 նում, հասկանալի պատճառներով չենք գտնելու:

14 Մխիթար Անեցի, էջ 101:  
 15 Հովհաննես Գրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 92, ՀՃՏ. Սամվել  
 Անեցի, Հասարակութիւն զսոց պատմութեաց, էջ 94:  
 16 Մխիթար Անեցի, էջ 101: ՀՃՏ. Հովհաննես Գրասխանակերտցի, Պատմութիւն  
 Հայոց, էջ 92-94, նաև՝ Սամվել Անեցի, Հասարակութիւն զսոց պատմութեաց, էջ 95:  
 17 Տ՛՛ս Ղևոնդ, Պատմութիւն, Վ. Պետրոսյան, 1887, էջ 20-22, Հովհաննես Գրա-  
 փուսակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 108-110:  
 18 Մխիթար Անեցի, էջ 101:

Մահմեդին և մահմեդականությունը, սկսած Սերեստից, անզրպատ-  
 նում են դրեթի բուր հայ պատմիչները, սակայն Մխիթար Անեցու պատ-  
 մածն առավել հանգամանալիցն է: Այն իր զուգահեռները շուտի մեղ  
 հայանի նախորդ հայ պատմիչներից և ոչ մեկի երկում, ուստի ներսևս  
 Ալիսյանը հանդիման էր կարծելու, որ նա օգտվել է Շապուհ Քաղաքատունու  
 Պատմությունից<sup>19</sup>: Մխիթար Անեցու հայտարարության համաձայն, Մահ-  
 մեդին զերաբերող հասկածը նա քաղել է մի նախկին մահմեդականի  
 երկից, որը քրիստոնեություն է ընդունել Կրեան կղզում, ուստի Ալիսյա-  
 նը ենթադրում էր, թե դիվանագիտական առաքելությանը Կրեան մեկ-  
 նած Շապուհ Քաղաքատունին է լսել և գրի է առել այդ ամենը<sup>20</sup>: Սակայն  
 Քարկինն Կյուլեսերյանի հրատարակած նորահայտ նյութերը հերքում են  
 այս վարկածը: Հետազոտողը, ի շարս այլ նյութերի, նրուսազեմի մատե-  
 նագրանի № 1288 ձեռագրից<sup>21</sup> հրատարակեց «Բաշունէն քաղածուս  
 խորագիրը կրող մի հատված, որը, նրա կարծիքով, միակ այբուբերն է  
 եղել Մահմեդի մասին պատմող հայ պատմիչների համար<sup>22</sup>: Գծվար չէ,  
 սակայն, ցույց տալ այն հակասություններն ու անհամապատասխանու-  
 թյունները հայ պատմիչների երկերում, որոնք վիպում են քաղում աղ-  
 բյուրների գոյությունը: Կյուլեսերյանի փորձերը՝ բացահայտելու ի՞նչ է  
 կամ ո՞վ է «Բաշունէն», համապատասխան ավյալների բացահայտության  
 պատճառով, հաշտությունը չեն պահպնել: Գծվար է առել նաև, թե կ'որ  
 է Քարգմանվել և ո՞վ է Քարգմանն այս երկը, ամբողջությամբ, թե թե-  
 րի՞ է այն մեղ հասել<sup>23</sup>:

Նրուսազեմի մատենագրանի № 1288 ձեռագրից<sup>24</sup>, որից հրատար-

<sup>19</sup> Տճ՝ Ն. Ալիսյան, Շապուհ Քաղաքատունի և իր պատմությունը, «Մատենագրանական հետազոտություններ», Կ. Ա., Վրենա, 1922, էջ 186—197:

 Քայց ծանր՝ զի Սմբատը՝ անուն, զոր յահախ Քաղաքաւայնիք ի  
 վերայ պատանեաց կոչեն, նշմարտութեամբ է Շամբատն՝, որ  
 խնդրեցաւ ի նարուզոգոնստորայ<sup>10</sup>, որպէս և գրեցաք վերագոյն։

5 ՀԱՌ ՀՈԿԵՐՈՐԳ

241ա ԹԷ ՈՐՊԷՍ ՎԱՂԱՐՇԱԿ ԶՆԱՆԵՆԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԶՐԱԳԱՐԱՏ  
 ԹԱԳԱԳԻՐ ԵՒ ԱՍՊԵՏ ԱՆՈՒԱՆԵԱՅՅՄ

Արգ՝ զկնի անցելոյ ազգին Հայկազանց, իբրև անկանէր Քա-  
 զաւորութիւնն Հայոց՝ ի Պարթևս, Վաղարշակ՝ եղբայր Արշակայ,  
 10 յարիենէ, արիենազը՝ զինքն և զսուն իւր, սկիզբն տանելով ի գլխոյ  
 իւրմէ և ի թաղէ։ Կոչէ առ ինքն զՔաղաքաւայն, որ ի Հրէից, շնորհա-  
 կալութիւն նմա ժառանցեալ վասն յառաջագոյն անձնատարութեանն՝  
 առ թագաւորն, միամտութեանն և բաշտութեանն։ Ասպէտ եղևալ  
 անուն ազգին, և իշխել նմա միայն թագ ի գլուխ թագաւորին զնել  
 15 և կոչից թագադիր, այլ և ասպետ։ Եւ առանց սպիտոյ և սկանց,  
 զկրտսր մարգարտն երեքտակեան վարսակալ ածել՝ յորժամ յար-  
 քունիսն և ի տան թագաւորին շրջիցի։

ՀԱՌ ՎԵՅՆԵՐՈՐԳ

ՎԱՍՆ ԵՆԱՆՈՒԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՅ

Բարունն իմաստուն Մովսէս այսպէս պատմէ վասն Ենանոսի  
 Քաղաքաւայնոյ, եթէ Ենանոս՝ ասպետ և թագադիր էր Արշամայ, որդ-  
 ւոյ Արաւաշէսի, եղբայր Տիգրանայ, հայր Արգարու, որում Ասորիք  
 զԱրշամ Մանուկա կոչէին։ Այս Արշամ, ասէ, ցասումն զեղեալ ի  
 վերայ Ենանոսի, վասն արձակելոյն զՀիւրկանոս, Հրէից բա՛նա-  
 25 յասպետ, որ էր զերեալ։ Եւ Ենանոս պատճառէ՝ անելով, եթէ փքր-  
 կանա խոստացաւ ՚ն բանքար։ Իսկ Ենանոս առարէ առ Հիւրկանոս՝,  
 զի տացէ զխոստացեալն։ Եւ երթնալ եղբայր եորա Սենեքբայ<sup>2</sup>  
 եգիտ սպանեալ զՀիւրկանոս՝ ի Հերովդէէ, և ոչ տուաւ ՚ն բան-

1 Գ Սմբատ  
 2 Գ Շամբատն  
 10 Զ նարուզոգոնստորայ  
 1 Զ հարց  
 2 Զ անձնատարութեանն  
 1 Զ Հարկանոս  
 2 Զ Սենեքա  
 3 Զ Հարկանոս

քարն: Յայնժամ քարկացեալ Արշամ՝ հրամայեաց տանելի զԵնա-  
 նոս կամ թողուլ զարկնս հրէութեան և երկիր պագանել արեղա-  
 կան, կամ բնաշինել լինել՝ ազգի նորա: Եւ անդէն՝ զորդիսն Ենա-  
 նոսի մատուցեալ ի սպանումն: Յայնժամ Ենանոս յերկիւզէ՝ սպան-  
 5 մանն կատարէ զկամս արքայի: Սակայն ոչ վստահացաւ ի նս  
 241ր Արշամ, ալ առարէ ի Հայս, տալով նմա զաշխարհն:]]

ՀԱՅ ԵՒՔՆԵՐՈՐԿ

ՉՐՈՅՑ ԱՐԳԱՐՈՒ, ՈՐԿՒՈՅ ԱՐՋԱՄԱՅ

Ստուգութեամբ և ըստ կարգի տիրեալ Արգար իշխանական  
 10 աթոռոյ թագաւորութեան Հայոց, զկնի Արշամայ՝ հար իբրոյ: Սա  
 նախ քան զամենայն թագաւորս ազգաց, կանուխ հաւատաց ի կե-  
 նարար բանն հար, յաստուածն իմ Յիսուս, ի ծագմանէ հարն բո-  
 լորից, և եղ զսա նախ ի հիմունս եկեղեցոյ Հայաստանեաց: Վասն  
 զի նախապատու մատուցաւ ի սեզան արքայական ի անկոյն, զոր  
 15 հայր մշակեաց և առ զնախագահ՝ աշտիճան, ուր թագաւորացն  
 պատրաստեալ ամենա: Զի ընդ նմին նախնին Քաղբատունեաց՝  
 Տուրիա, սքանչելին ի պնդութիւն հաւատոյ, որ ոչ ընդ ալ ազգա-  
 կանս իւր թուլացաւ, ալ խոյս տուեալ չԱրշամայ՝ պահեցաւ ի հա-  
 20 ւաստս մինչ ի գալ Քաղէոսի: Ի միասին հաւատացին ի Յիսուս  
 նախնին Քաղբատունեաց Տուրիա և թագաւորն Արգար: Զի երկո-  
 րեան սորա ըստ մարմնոյ ազգք և զարմք և սերեալը չԱրշամէ-  
 զԱրգար ասեմ ի Քեաուրական ծննդոցն՝ չԱրշակայ և ի Վաղար-  
 շակայ, և զՏուրիա՝ ի Դաւթայ սերեալ և ելեալ, որոց նախնի՝ Իսա-  
 25 հակ և Արբահամ: Զի որ լուսաւորութեան և փրկութեան պատրաս-  
 տեալ էր պատճառ ազգիս Հայոց՝ զլուսաւորիչն ասեմ և զՏրդատ՝  
 Պահլաունիք: Եւ սորա էին յարմատոյ Արբահամու, ի Քեաուրա-  
 կան ազանց, թոռուք Վաղարշակայ, որոյ և Արգար, և ինքորդն ի  
 Վաղարշակայ, նախահաւ Տրդատայ: Որ թլպէտ և անցին ժամա-  
 նակք լուովք ընդ մէջ և թագաւորք Ք չԱրգարու մինչև ցՏրդատ. ա.  
 30 Սանատրուկ ք. Երուանդ<sup>2</sup>, գ. Արտաշէս, դ. Արտաւազ, Ե. Տիրան,  
 գ. Տիգրան Փոքր, է. Վաղարշակ, բ. Խորով, սպա Տրդատ: Որք ի  
 կողմանն կանխեցին, ժամանեցին սոսկալի և նորալուր սիրոյ զեզ-

1 9 լինել  
 2 2 յերկուզ

1 9 Քաղէոսի  
 2 2 Երուան

242a մուր, ևս առանկէ քան զամենայն ազգաց ի մեզ՝ ի մեռառեան  
 ժամեայ գործանեայտա աստուածակերտ այգւոյն: Որոց զյամա-  
 5 րութիւնն զտասն ժամեայ Հեղզագործ զանդազանսն և զերկարու-  
 5 րեան կոխեայ, զսակ վարձուն ինքն նախ յափշտակեաց, թէպէտ և  
 յին ալլոց ազգաց շար է: Իսկ իմն տէր առատ է ամենինն և զյոյժ  
 յնախնն եկն առնել նախ, և քարձր, և առաջին՝:

ՀԱՅ ՌԻՓԵՐՈՐՑ

ԹԷ ՈՐՊԷՍ ՉՈԳԱԻ ՅԱՐԵՆԵԼԻՍ ԱՐԳԱՐ՝ ՎԱՍՆ ԻՐՈՏՆ ԱԶԳԱՅ

10 Պարտ և պատշաճ վարկանիմ աստանայր սակաւութ առնույ  
 զտասցեալն ի Մովսէսէ, թէ յորժամ չոգար Արզար յԱրենէս, որ-  
 պէ՛ս յարդարեաց զորդիս Արշարի: Վասն զի ի մեռանելն Արշարի  
 ի քաղաքին իւրում Բալիս, երէց որդի՛ նորին Արտաշէս, յարուցեայ  
 ի վերայ այլ եղբարցն և քեռն յափշտակել զիշխանութիւն Հայրն՝  
 15 զնէ զնոսա ի բանս մահու: Վասն այսպիսի զուժի երթեայ Արզար  
 յԱրենէս, համոզէ զեղբարսն ի խաղաղութիւն և կացուցանէ զանդ-  
 րանինն զուխ և առաջին ի վերայ եղբարցն՝ զԱրտաշէս: Իսկ զհր-  
 20 սեր եղբարսն զԿարէն և զՍարէն և զՅայրն զԿոմշ՝ ի հնազանդու-  
 րիւն նմա: Եւ զնէ արէնս և ուխտադրութիւնս ի մէջ եոցա, զի եթէ  
 Հասցէ ի պակասումն և ի սպառումն Թագաւորութիւնն ի տանէ և  
 25 յորդոց Արտաշէսի, մի՛ առաջ աւատարազոյ սումեր պայազատել, և  
 անկանել ի ժառանգութիւնն Հայրենի, այլ յորդոց եղբարցն առնույ  
 զիշխանութիւն և զանուր: Դե՛ և անուանս եոցա յանուն քաղաքին  
 իւրեանց Բալիսայ՝ Պահլաւ: Եւ ցեզս որոշէ զնոսա անուամբ այս-  
 պիսեա՛ Կարէնի Պահլաւ, Սարէնի Պահլաւ և զազգ քեռն՝ Ասպու-  
 30 Հասցեոսի Պահլաւ. յանուն անն Կոմշայ անուանեայ, որ էր ասպետ  
 յԱրշարէլ՝<sup>2</sup> Հարէն Կոմշայ, կարգեայ ասպետ ամենայն Արեաց  
 աշխարհին: Իսկ մերն լուսաւորիլ ի Սարէնեանն՝ Պահլաւ էր, և  
 ազգ Կամսարական՝ ի Սարէնեանն՝ Պահլաւ: Եւ արգ՝ զի ոչ իբր ան-  
 242բ յարանութիւն Թուսցին յիշատակ կարգելոց քանիցս, ի սոցանէ ը-  
 30 ցուցին զազգականութիւնս երկուց Թագաւորացն՝ Տրդատայ ասեմ  
 և Արզարու Որպէս կամք նախաւեսակ կամացն յարգարեցին, նախ

\* Հմմտ. Մատթ. Ի 1—16

1 Պ որդի

2 Ձ Արշարէ

3 Ձ Սարէանն

4 Ձ Սարձանն

5 քան զգոլն արարածոց, և որպէս վասն Արգաթու և Կախնեացն Քաղ-  
 րատունեաց ծանոցաւ ի միում ժամանակի ժազումն ողորմութեանն  
 աստուծոյ, հաւատալ ի բանն աստուծոյ, սոյնպէս և ի Եոյն զթու-  
 փին պատրաստեցան երկուց Քաղաւորացն ծնունդք՝ Արշակայ և  
 10 Վաղարշակայ: Մարմնական իշխանութեամբ և հոգևորական Քա-  
 զաւորութեամբ մեծացուցանել զազգս Հայոց. այն որ սովորն է  
 յարհամարհ և յօլինչս մեծ ցուցանել մեծութիւն, զի զարութիւն  
 Եորա ի տկարութեան կատարի: Եւ փառքն մի՛ կարծիցին ամբար-  
 15 ձեալ ինչ սեռոտի կամաց մարդկայնոց, այլ ճշմարիտ իշխողի և  
 կառավարի, կարողին աստուծոյ: Եւ որպէս ասացար վերագոյն, ի  
 հաւատոց Արրահամու ծնեալք և սերնալք ի խոստացեալ ճշմարիտ  
 արհեստիւն ժամանեցին և հաւատացին ծնունդք նոցին: Եւ որպէս  
 20 եղաք որդիք հաւատոցն Արրահամու և ի մարմնասեր Եորայն՝ մի՛  
 զրկնացուք ազգականութենէ: Այսպէս հաւատարիմ է բոնս. Արշակ  
 15 Քաշ, Քաղաւորեալ ի զաւակէ Արրահամու, ի Քառուրական ծնեղոց,  
 զայս ձայնս աւետեալ առ Արրահամ, թէ յՔաղաւորք ի թէն ելցնեա՞»,  
 որք Քաղաւորեցին մարմնական արութեամբ և հոգևորական պեր-  
 20 ճութեամբ ի կեանսն յաւերժականս: Եւ որպէս սնոյմ ասել, Քա-  
 զաւորէ Արշակ Քաշ յեա Կ ամի մահուանն Աղերտանգրի ի վերայ  
 20 Պարթեաց ի քաղաքին Բալիս Առաւառին, յերկրին Քուշանաց: Քա-  
 փելով զամենայն արեւելեայնս, առնու և զՔաղաւորութիւն Քարելո-  
 նի զկնի ամաց տասանց Անտիոքեայ Քէսասայ: Եւ զկնի Քաշին  
 Արշակայ՝ որդի նորին Արտաշէս: Հաս պաշտօնաւ Արշակ՝ որդի  
 243ա նորին, որ Մեծն կոչեցաւ: Սա պատերազմի ընդ Գեմետրեայ, յորդ-  
 25 տոյն Գեմետրեայ՝ Անտիոքոնեայ, քանզի ի վերայ նորա եկն ի Քա-  
 րելոն: Կալեալ զնա Արշակ Մեծ՝ տարա ի Պարթև հանդերձ եր-  
 կաթի կապանաւք, ուստի և Սիրիպիղէսն՝ կոչեցաւ Եւ տիրեալ եր-  
 րորդ մասին աշխարհի, որպէս ի պատմութեանցն Հերոզոտեայ  
 ուսանիցիս, զի յերիս բաժանեալ զբոլոր աշխարհս, զնէ անուանա  
 30 նոցա՝ Եւրոպայ, Արիէ և Ասիա, որում տիրեաց Արշակ Մեծ՝ ամս  
 ՄԳ: Սա զՎաղարշակ՝ զեզրայս իք Քաղաւոր կացուցանէ ամենայն  
 աշխարհիս Հայոց ի ԿԱ ամի իւրոյ Քաղաւորութեանն: Եւ արդ՝  
 վասն զի պահանջէ, հանէ յընդարձակ և ի լայն սփիռս գրանն

\* Մեկ. ժէ 7

5 Պ արեւմտեայն

6 Ա Քեսաս

7 Ա Գեմետրի

8 Պ Սիրիպիղէս

պատմութեանն արէնք, դարձեալ ի սոցանէ երկոցունց բերցուք ի մի տեսակ:

- Արշակ Քաշ՝ Ա
- Արտաշէս՝ ԽԶ՞
- 5 Արշակ Մեծ՝ ՄԳ
- Արշական՝ Ա
- Արշանակ՝ Ա
- Արշէս՝ Ի
- Արշաիբ՝ ԽԶ
- 10 Արտաշէս՝ ԱԳ
- Դարեհ՝ Ա
- Արշակ՝ ԺԹ
- Արտաշէս՝ Ի
- Պերոզ՝ ԱԳ<sup>10</sup>
- 15 Վազարշ՝ Մ

Արտաւան՝ ԱԱ, զոր սպան Արտաշիբ Ստահրացի: Եւ ազգային նորին հոսրով, հայր Տրդատայ, խնդրէ զզբէժ ազգայնութն յԱրտաշէր Բանակալէ՝ ամս Ժ: Որպէս և տնտեսին իակ Պահլաք յանուն քաղաքին Քալխայ, և Արշակունիք՝ յԱրշակայ:

26 ՃԱՆ ԻՆՆԻՐՈՒԴ

ԿԱՐԳ ԱԶԳԻՆ ՎԱԶԱՐՇԱԿԱՅ

Այսպէս և եղբայր նորա ասացի Վազարշակ, թագաւորն Հայոց, ամս՝ Ի

- Արշակ՝ ամս ԺԳ
- 25 Արտաշէս՝ ամս ԻԵ
- Տիգրան՝ ամս ԱԳ
- 243բ Արտաւազ՝ Բ
- Արշամ՝ ԱԸ
- Արզար՝ ԱԸ
- 30 Սանատրուկ՝ Ա

- Սրուանգ՝ <Ի><sup>1</sup>
- Արտաշէս՝ ԽԱ
- Արտաւազ՝ Բ
- Տիրան՝ ԻԱ||
- Տիգրան՝ ԽԲ
- Վազարշ՝ ԻԱ
- Տոսրով՝ ԽԸ

9 Գ ԻԶ  
10 Գ Գ

<sup>1</sup> Սամվել Անեջի, Հատրճունք ի զոց պատմագրոց, էջ 55:

- Ի ԵՔ՝ ամի Խոսրովու սղանանի Արտաւան, ազգական նորա: Եւ արգ՝ այսպէս ուսար զազգարանութիւն սոցա չԱրրահամէ գոյ: Աննու, առէ, Արրահամ իւր կին զՔնտուր՝ զազախին իւր, և ի նմանէ ծնանի զԵմբրան և զԵրարբն: Իսկ իբրն ծնաւ անուեացն ժառանգ՝ Իսահակ, հաննալ զազախինն ընդ արեւելս և զորդիս նորին, յորոց ծննդոց՝ Արշակ և Արշակունիք: Եւ կատարումն արհնութեանն զխաւորեալ Տշմարտի ի թոռունս նոցին, որպէս և ասացար, չԱրգար, ի Տրգաս, ի մերն Լուսաւորիչ Գրիգոր, որք ժառանգեցին զխոստացեալ արհնութիւնն մարմնով և հոգով, ընդ թագաւորեալսն յաստուածոյ: Զի յարհնութենէ անտի Արրահամու մինչև ցմբկրրութիւնն կենարարին բովանդակին ամք ՍԺԿ և մինչև ցլուսաւորութիւն ի սրբոյն Գրիգորէ՝ ՍՅԻԿ: Արգ՝ այսպէս պատուեալ զտունս թորգոմեան, զազգս ասրանազեան, զզարմա յարեթեան, զսերունդս հայկական, անուանեալ յանուն միածնի իւրոյ քրիստոնեայս, արար և որդիս հաւատոցն Արրահամու և ժառանգս ճըշմարտն Իսահակայ, որդւոյն միածնի Յիսուսի Քրիստոսի, տեան և աստուածոյ: Զայս և զայսպիսի իրի պատահումն ոչ անխորհրդարար և ոչ առանց մեծի տեսութեան. և՛ զթոյ, և՛ խնամոց, և՛ սիրոյ վարկանիմ պատուեալ և մեծարեալ մարդասէր փրկչին, որում փառք և մեծապէս զհռութիւն՝ խնամողին և մեծարողին և յարգողին զազգս Հայոց մարմնաւոր և հոգեոր փարթամութեամբ՝ արհնեալ է եւ յախտեանս:

#### ՀԱՅ ՏԱՄԱՐՈՐԻ

#### ՍԿԻՉՐՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ

- 25 Սկսանիմք համառատութիւք քաղել զյիշատակս Բագրատունեացն, մինչև բերեալ հասուցուք ի վերջին թագաւորն Բագրատունեաց՝ Յովաննէս. ետի՛ զասպետսն, թագադիր իշխանս և ապա՛ զթագաւորեալսն զկնի նոցին: Արշակ, որդի վազարշակայ մերոյ առաջին թագաւորին Պարթևաց, թագաւորէ ամս ԺԳ: Զսմանէ ասի ի զիրս բազում արութիւն և կարգս ուղղութեան յարդարեալ և զՊոնապոլիսն վանեալ: Եւ զբոլորատէզ նիզակի իւրոյ խորագոյն հարստէ ի սիրտ վիժի միոյ մեծի, ի նշան յիշատակի կանգնէ յեզր ծովուն Պոնապոլի, զոր համբաւին զայն նիզակ միեալ արեամք զեւեոց: Զոր և յիտոյ թէպէտ և պատուեցին զարձանն, իբր զգար-

- մանալի իմն և զհրաշալի զործ, սակայն ընկնցին ի ծովն Պոնտոսի, յազազս միտանգամ զոռալոյն Արաաշիտի ընդ նոսա: Իսկ այսպէս պատմէ Մովսէս վասն սոցին Բագրատունեաց, թէ յաւարս Տիգրանայ Արշակունւոյ, որդւոյ Արաաշիտի, որդւոյ Արշակայ, որդւոյ վա-  
 5 զարշակայ առաջնոյ մերոյ, որ թագաւորէ Տիգրանս այս լինն և ժամի Արշակակայ<sup>1</sup>, ազգայնոյն իւրոյ, թագաւորին Պարսից: Սա, յիս սպանման հարն, ժողովէ զգարս Հալոց ընդզէմ երթալ զարացն Յունաց և ընդզէմ բախեալ ի վերջ՝ նհանչել: Եւ ինքն լուծալ զայ լինի, որ կուի Կամախ, և զԱրտեմիդեայ պատկերն կանգնէ  
 10 յնրիզալ: Եւ զհոս և երկրպագութիւն նախարարացն հրամայեաց մատուցանել, զոր ոչ առեալ յանձն ազգին Բագրատունեաց: Այլ մի ոմն ի նոցանէ անարգեալ յայտնապէս զաստուածսն և քաշապէս զաւանեալ զանուն շշմարտին աստուծոյ, վասն որոյ հատանի լն-  
 15 զուն զովնի<sup>2</sup> ի վերայ շաշմնի խոտտովանութեանն և անարգութեան զիցն, որում անուն Ասուղ ճանաչիւր: Իսկ այլքն յանձն առին  
 244բ ուսեւ զմիս զհհիցն, այլ ոչ զերկրպագութիւն կոտցն:]]

ՀԱՅ ՄԵՏԱՌԱՆԻՐՈՒՄ

### ՅԱՂԱԳՍ ԱՐԳԱՐՈՒ

- Որդի Արշամայ Արգար, թագաւորէ ի վերայ ամենայն Հալոց  
 20 ի քանն՝ ամի Արշարի<sup>2</sup>, Պարսից արքայի: Այս Արգարիտս կոչի Աւագ այր, վասն առուել հեզութեանն և իմաստութեանն, և ոչ կարացեալ ուղղախաւով Յունաց և Ասորաց՝ կոչէին Արգար: Սա ի ձեռն մերոց զարաց առնու զվրէժ արեան և սպանման Մկրտիկն արդարոյ և Կարապետին կենաց: Որպէս միաբանի ընդ Արես Ար-  
 25 գար, և աստեկապէս խորտակեն զգարսն Հերովդի, վասն զի անարգեաց զգուար Արետայ արքայի և առ զՀերովդիացայ, որով զործեաց զգործ զառն և առուել զածան: Իսկ ի ժամանակին իբրև դարձաւ Արգար յարնելից, որ երթեալ միաբանեաց զեզարս ազ-  
 30 րհար բղնչին և զՇամշազրամ, առ Մարինոս<sup>3</sup> հազարապետ Պաղեստինացոց և Փինիկիցոց և Ասորոց, և զԱնան հաստարիմ իւր, վասն զպացուցանելոյ նմա զպատճառ երթալոյն իւրոյ յարն-

<sup>1</sup> 2 Արշակայ  
<sup>1</sup> Փ ի

<sup>2</sup> 2 Արշարի  
<sup>3</sup> 2 Մարիտա

յրս: Իսկ առաքեալքն ի նմանէ իբրև շոգան անդ, վասն հրաշայի համբաւոյն Քրիստոսի ելին յԵրուսաղէմ՝ անսանել զնա: Որ և ականատես եղեալ սքանչելի՛ գործոց նորին՝ եկեալ պատմեցին Արգարտ, և նա ի համբաւոյ արանցն հաւատացեալ ասէ. «Այդ սքանչելիք, զոր պատմէք, ոչ մարդոչ է, այլ աստուծոյ շնամարտի: Եւ վասն ցաւոց մարմնոյն, զոր ախապցաւ յերկրին Պարտից, որ եւ ընդ հետս մարդկան, զրէ Թուղթ՝ առ Քրիստոս՝ զայ և բժշկել զնա:

ԹՈՅՊԹ: ԱՏՂԱՐՈՒ, ՉՈՐ ԿԱՏՊԱՆ ԿՐԷ ԲԱՅՈՒՆՆ ՄՈՎԱԸՍ ԶԲԱՆՍ  
ԹՂՉՈՅՆ, ԱՅՉՊՅՆ

10

Արգար Արշամայ, իշխան աշխարհի, առ Յիսուս փրկիչ < և >՝  
բարեբար, որ երևեցար յաշխարհից Երուսաղէմայ, ողջոյն:

245ա

Լուեալ < է >՝ իմ վասն քս և վասն բժշկութեանդ, որ լինի ի  
ձեռս քո, առանց զեզոց և արմատոց: Զի որդէս ասի՝ տաա զու կու-

15

րաց անսանել և կազաց զնալ, զբորտա սրբել, և զայսս պիղծս և  
զդես հանել: Եւ որք միանգամայն չարչարեալն են ընդ յերկար հի-

20

անդութեամբ՝ բժշկես, զու և զմեռեալս յարուցանես: Եւ իբրև լուսայ  
վասն քո զայս ամենայն՝ եզի ի մաթ իմում զմի յերկուց. կա՛մ թէ  
զու իցես աստուած իջեալ յերկնից՝ գործես զայդ, կա՛մ որդի իցես  
զու աստուծոյ և զայդ ասնես: Արդ՝ վասն աշխարհի գրեցի ևս՝ ազա-  
լել զքեզ, զի աշխատ լիցիս, եկեացես առ իս և բժշկեցես զհիւան-  
դութիւնս, զոր ունիմ ես: Եւ յայ, զի Հրէայք արանչեն զքէն և  
կամին չարչարել զքեզ, բայց քաղար մի փորրիկ և զեզեցիկ է իմ,  
բաւական է մեզ երկոցունց:

25

Որոց առաքեցանն արածեալ զԹուղթն՝ պատահեցին նմա յԵ-  
րուսաղէմ: Զայս վկայէ և անաարանկան բանն, թէ շէին սմանք ի  
հեթանոսաց եկեղոց առ նա՝: Վասն որոյ ոչ համարձակին, որք  
լուսնն, ասել ցՅիսուս: Իսկ ինքն փրկիչն մեր յայնմ ժամանակի,  
յորում կուցեաց զնա Արգար, ոչ առ նմա յանձն, բայց թղթոյ արժանի  
արար զնա, որ ունէր արինակ զայս:

30

\* Հմմտ. Յոզ. մթ 20

1 \* զքանչելիք

2 \* Բուխս \* Թուղթ

1 2 \* Թուղթ

2 \* Մովսէս Կրթեացի, Պատմութիւն

Հայոց, էջ 148:

3 \* Նախ անգամ

Նրանի իցէ այնմ, որ Հաւատայ յիս՝ իբրու չիցէ նորա տեսեալ զիս, զի գրեալ է վասն իմ այսպէս. զի որք տեսանեն զիս՝ ոչ Հաւատան յիս, և որք ոչ տեսանիցեն զիս՝ նորա Հաւատացեն և կեցցեն: Իսկ վասն այնք, զի գրեցեր դու առ իս՝ զայ ինձ առ թեզ, արժան է ինձ կատարել սատ զամենայն ինչ, վասն որոյ առարկեցայ ևս: Եւ իբրև կատարեցից զայս՝ ապա Համբարձայց: Առարկեցից թեզ մի յաշակեբտաց աստի իմոց, զի զցաւս թո բժշկեսցէ և կեանք թեզ և որոց ընդ թեզդ ևն՝ շնորհեցէ:

245բ Չայս Թուղթ երեք՝ Անան, սուրհանդակ՝ Արգարու, ընդ որում և զկենդանագրութիւն փրկչական պատկերի:

ՀԱՅ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԻ

ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԹԱԳՆՈՍԻ ՅԵԴԵՍԵԱՑ ԵՒ ՄԿՐՏԵԼՆ ՉԱՐԳԱՐ, ԸՆԴ ՈՐՈՒՄ ԵՒ ՉՏՈՒԹԻԱ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

15 Յև Համբառնայոյ փրկչին մերոյ, Թոգմաւ առարեալ, մի յԹեկիցն, առարեաց զԹաղէս, որ էր մի յԵթանաանից անաի, ի քաղաքն Եդեսեայ՝ բժշկել զԱրգար և աւետարանել ըստ բանին տեառն: Որոյ կենայ հմուտ ի տուն Տուրիոյ իշխանի Հրէի, զոր առն լինել յազգին Բագրատունեաց: Որոյ խաւսեալ յԱրշամայ՝ ոչ ուրացաւ զհրէութիւնն ընդ այլ ազգահանս իւր, այլ եռն արիւնաթեկաց մինչև ի Հաւատալն ի Քրիստոս: Եւ ել Համբաւ առարելոյն ընդ ամենայն քաղաքն: Լսեալ Արգարու, առէ. սնա է, վասն որոյ գրեացն Յիսուս և իսկոյն կոչեաց զնա: Եւ եղև ի յաանել Թաղէս֊

20 սի՝ տեսի մեծ երևցաւ Արգարու յերեսն Թաղէսի: Եւ յարուցեալ ի գահոյիցն՝ անկաւ ի վերայ երեսաց իւրոց և երկիր եպագ նմա: Եւ զարմացան ամենայն իշխանքն, որ շուրջ կային, զի ոչ զիտացին զտեսիլն: Եւ առէ ցնա Արգար, թէ սԴՈ՞ւ իցես արդարև աշակեբտ արհնելոյն Յիսուսի, զոր ասաց ինձ առարել այսր, և կարո՞ղ իցես բժշկել զցաւս իմա: Պատասխանի ևս նմա Թաղէ. սեթև Հաւատացես ի Յիսուս Քրիստոս յորդին աստուծոյ՝ ասցին թեզ ինդրուածք սրաի թոր: Առէ ցնա Արգար. տես Հաւատացի ի նա և ի Հայր նորա, վասն որոյ կամեցայ տեսուլ զզարս իմ և գալ կո-

տորնի զՀրէայսն, որ խաչեցինն զնա, և քէ ոչ էր արգելեալ վասն  
 թագաւորութեանն Հոռմայեցոցս: Եւ յայս բանէ սկիզբն արարեալ  
 Քաղէի՝ աւետարանեաց նմա և քաղաքի նորա: Եւ եղեալ ձեռն ի  
 վերայ՝ բժշկեաց զնա և զԱրդիս՝ պատազրոս իշխան քաղաքին:  
 5 Եւ և զամենայն, որ էին ի քաղաքին Հրեանդք և ախտածէօք,  
 246ա բժշկեաց, և հաւատացին ամ<sup>1</sup> և ներհան: Եւ մկրտեցաւ ինքն Արզաւ  
 և ամենայն քաղաքն: Եւ ոչ զոր բնութեամբ անէր ի հաւատս, բայց  
 ար ըստ արէ՛լ յաւելեալ ի հաւատացեալսն՝ բազմանային: Իսկ  
 առաքելոյն Քաղէի զխոյրարար զմն մետաքսագործ մկրտեալ և  
 10 անուանեալ Աղղէ, ձեռնադրեալ ի վերայ Աղսեայ՝ փոխանակ իւր  
 թողու առ արքայի: Եւ իւր առեալ հրովարտակ յարքայէ, զի ամե-  
 ներհան յօրինէն աւետարանին Քրիստոսի՝ զայ առ Սանատրուկ  
 բեռորդի նորին, զոր կարգեալ էր < ի վերայ ><sup>2</sup> աշխարհս [և]՝  
 զաւրաց: Բայց Արզար յաւտարեցաւ զրն թուզթ առ Տիրեւր՝ արինակ  
 15 զայս:

ՔՅՈՒՄՅ ԼԵՐՆԱՐԵՒ ԵՅ ՏԻՒՆԻՐ

Արզար արքայ Հայոց, տեսն իմոյ Տիրեւրեայ կայսեր Հոռմա-  
 յեցոց խնդալ:  
 20 Գիտելով իմ, թէ ոչ ինչ ծածկի ի ցումսէ թագաւորութենէց, այլ  
 իրրն զմտերիմ քո՝ աւելի ևս իմացուցանեմ ի ձեռն զրոյս: Զի  
 Հրէայք, որք բնակեալ են ի դաւառս Պաղեստինացոց, ժողովեալ  
 խաչեցին զՔրիստոս առանց իրիք յանցանաց, ի վերայ մեծամեծ  
 երախտեացն, զոր արար՝ նշանս և սրանչելիս, մինչև զմեռեալս  
 անգամ յարուցանել: Եւ գիտեա՛, զի զաւրութիւնքս այս ոչ են սոսկ  
 25 մարդոյ, այլ աստուծոյ: Զի ի ծամուն, յորում խաչեցին զնա, արե-  
 ցակն խաւարեցաւ, երկիր շարժեալ տատանեցաւ, և ինքն յա երկր  
 ատուրց յարեալ ի մեռելոց և երևեցաւ բազմաց: Եւ այժմ յամենայն  
 սեպեա անուն նորա, ի ձեռն աշակերտաց նորա, սրանչելիս մեծա-  
 մեծս կատարէ, որ և առ իս ինքն իսկ եցոյց յայանապէս: Եւ արդ՝  
 30 այսուհետև տերութիւնդ քո գիտէ, որ ինչ արժանն է հրամայել ի  
 վերայ ժողովրդեանն Հրէից, որք զայնն գործեցին. և զրն ընդ ամե-  
 246բ նայն տինգերս, լի զի երկրպագեսցին Քրիստոսի՝ իրք շէմարտի առ-  
 տուծոյ:

1 2 օրստարէ

2 Մովսէս ետրեանքի, Պատմութիւն

3 նուրն անգամ:

4 29 թուիթ

Հայոց, էջ 157:

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆԻ ԱՅԳԱՐՈՒ Ի ՏԻՔԵՐԵՆՑ

Տիրեր կայսր Հոռմայեցոց, Արզարու թագաւորին Հայոց խըն-  
դալ:

5 Ձթուզթ մտերմութեան քո ընթերցան առաջի իմ, վասն որոյ  
շնորհակալութիւն քեզ ի մէնջ հասցէ: Թէպէտ և ի բազմաց լուծալ  
է մեր [զայդ]<sup>2</sup> յառաջագոյն, եցոյց և Պիղատոս ստուգապէս վասն  
նշանացն նորա և թէ յետ յարութեան նորա հաստատարիմ և զն՝ թէ  
աստուած է: Վասն որոյ և ես կամեցայ առնել զայդ, զոր զուգ խոր-  
10 հեցար: Այլ մեք տուաք հրաման ամենայն ումեք, որում և հաճոյ  
թուեսցի Յիսուս, ընկալցին զնա ընդ աստուածս: Եւ մահ այնոցիկ  
սպաննացեալ, որ շարախաւս կայցեն զքրիստոնէից: Եւ վասն ժո-  
ղովրդեան Հրէից, որ հանդգնեցան խաշել զնա, զորմէ լահմ, թէ ոչ  
արժանի խաշի և մահու էր նա, այլ պատուի և երկրպագութեան,  
15 յորժամ առից պարագումն ի պատերազմէս Սպանիացոց, քննեալ  
հատուցից նոցա զարժանն:

ԳԱՐՁԵԱԿ ԱՅԳԱՐՈՒ ԱՅ ՏԻՔԵՐ

Արզար արքայ Հայոց, տեսոն իմում Տիրերի կայսեր Հոռմա-  
յեցոց խնդալ:

20 Ձթուզթ գրեալ ըստ արժանի քո տէրութեանդ՝ տեսի և ընդ  
հրաման մտածութեանդ քո ուրախացայ: Բայց քեզ, տեսոն իմում  
հաճոյ <թուեսցի><sup>3</sup> առաքել <զայլ որ><sup>4</sup> յնրուաղէմ փոխան  
Պիղատոսի, զի լուծցի <նա><sup>5</sup> անարգանաւք յիշխանութենէն, յո-  
րում կարգեցերն զնա, վասն զի արար զկամս Հրէիցն և խաշեաց  
25 զՔրիստոս տարապարտուց: Ողջ լինել քեզ ըզձամ:

ԱՅԼՈՅՍ ՊԱՏԿԱՆ ՄՈՐԻ, ԿԱՐԳԵ

Իսկ թագաւորն Արզար, իբրև զհշմարիտ նախանձաւոր փրկ-  
247ա լին, առնու զըլժս ի գրծողաց փրկիլլին՝ գրով և յորդորմամբ զթա-  
գաւորս Հոռմայեցոց, մինչև զկատարումն առ խնդիրն ի Տիստոսէ  
30 և ի Վեսպիանոսէ՞ զկնի նա ամաց: Այլ իբրև տեղեկացաւ կայսր

1 ՁԹ թիթոյն

2 Մովսես եօրձեացի, էջ 154:

3 Մովսես եօրձեացի, էջ 155:

4 Նույն տեղում:

5 Նույն տեղում:

6 Գ Վեսպ(աս)իանոսէ

Տիրեր զնենգաւոր գործն Պիղատոսի յԱրգարու, առաքէ կոյլ զնա  
 ի դուռն Թաղատրական՝ աննել նմա ըստ արժանոյ անուրիշու-  
 քեանն: Եւ մինչ նաւելին ի վերայ Ովկիանոսի, ժանուցեալ զսաս-  
 տիկ սպաննալիս կայսերն, անձամբ արար զվրէժ անձին իւրոյ:  
 5 ընկէց զինքն ի խորս ալեացն և հեղձամզձուկ եղեալ, սուզեցաւ  
 յատակս անդեղոց: Եւ այսպէս մասնաւորն ի բազմաց, ամենայն  
 անյուսարար համարձակելոց ի բանն աստուծոյ, խնդրեցան վրէժք,  
 առ ի լինելոյ հաւատարիմ զատաստանին աստուծոյ:

ՀԱՌ ՉՈՐԵՑԱՍԱՆԵՐԻԿ

10

ՅԱՂԱԳՍ ՍԱՆԱՏՐԿՈՅ

Արդ՝ Թաղատրէ Հալոց զկնի Արգարու քնորդի նորին Սա-  
 նատրուկ: Քանզի իբրն կալաւ զԹաղատրութիւնն Արգար զամս ԼԸ,  
 վախճանեցաւ նշմարիտ խոստովանութեամբ: Այլ սրդի նորին  
 անանուն, ոչ ըստ առաքինութեան հայրենի գնայր, այլ երաց  
 15 զգրունս մեհենիցն և խոտորեցաւ ի կոամոյութիւն: Եւ յայնմ հետէ  
 պատանեցաւ Թաղատրութիւն Հալոց յերկուս. անանուն Թաղատրէ  
 յնդհեսայ, և Սանատրուկ՝ ի Հայս: Այլ Սանատրուկ ի քարոզու-  
 քեանն Քաղէի հաւատաց, որ և հետոյ և սա յերկիւղէ՝ նախարար-  
 ացն դարձեալ ուրացաւ, և շարչարեաց զառարեայն և զգուար  
 20 իւր զՍանատրուկս, մատուցեալ ի նուկր երանելի նուիրին: Ըստ ամին  
 արիւնակի, անանուն և զԱղղէ նահատակեալ՝ սրով յանկարծուստ  
 247բ զսաս նորա կտրեալ, վասն զի առաքեալ առ նա աննել խոյր զլիտոյ  
 նորա ըստ արիւնակի հարն: Իսկ նորա պատասխանեալ ասէ, թէ  
 ռնչ գործեսցեն ձեռք իմ խոյր զլիտոյ, որ ոչ խոնարհեալ երկրպագ  
 25 որդոյն աստուծոյս:

Եւ Սանատրուկ ժողովէ զաւր ի ձեռն քաջացն Բագրատունեաց  
 և Արծրունեաց, իւրոց զայնկացն, և պատերազմի ընդ որդիսն Ար-  
 գարու, զի բովանդակ ասցէ զԹաղատրութիւնն: Ես նա մինչև այս-  
 պէս պաշարեալ կայր ի զողման մեծի, ի վերուստ նախաժամանեալ  
 20 նմա վրէժն Աղղէի արգարոյ: Վասն զի ի վերնատանն՝ ապարանք  
 իւրոյ աայր կանգնել՝ սին կենեալ և ի ներքոյ անցեալ սեանուստ  
 կամէր պաշտանել ինչ: Անկեալ սեանն ի վերայ նորայ, շարաշար

1 2 յերկէ  
 2 2 վերնատանս

1 2 կանկնել

ստատկեաց զամբարշտեան, և այն ինչ պատշաճապէս պատշո-  
 ճեաց զգործն: Վասն զի անձնատուր և զեն բնակիչը Եղեանայ առ  
 Սանատրուկ, ժիպն զայս ուխտ խնդրեալ ի նմանէ, զի մնացնն  
 ի դաւանութեան, զոր սելէին առ Քրիստոս: Զոր և ուխտեալ, յետոյ  
 5 ստեաց, վասն զի կատարեաց զամենայն որդիսն Արգարտու Իսկ  
 Սանատրուկ վասն աշնր, ասի, կոչիլ սեուս, զի ճանապարհ կա-  
 լեալ քնո Արգարտու ի Հայոս, կալեալ զնոսա բոյ ի լերինս Կոր-  
 դուաց. և ցրէր զամենեանն: Եւ զայնակ մանկանն, քոյր Բիրա-  
 տեալ Բագրատունայ, կին Խոսրոսեայ Արծրունայ, առեալ զմա-  
 10 նուկն՝ եղ ի մէջ ստեանցն, լեալ ի ներքոյ ձեանն զերիս արս և  
 զերիս գիշերս: Եւ Մոզսէս ասէ, եթէ շան սպիտակ լեալ ընդ հոսա  
 ի բնակելն ի մէջ ձեանն, աշխական շերտութեան գտեալ. զոր  
 248ա և զայնկին կարգացեալ զմանուկն Եանատուրք: Սալ Թագատրեայ  
 ամս և, մեռանի ի զիպմանէ նետոյ որոսյ, զվրէժ առեալ սպանման  
 15 դատերն:

Իսկ զկնի մահուանն Սանատրկոյ շփոթեալ Թագատրութեանն,  
 անկանի յաւատարմինն, առասպելածինն Համբունայ և ոչ յարի-  
 նական խառնից, ի վարար կնոջէ Արշակունայ, Երուանդ անուն  
 մանկանն: Մնի ի դրան Սանատրկոյ, որոյ, ասի, առեալ զԹագա-  
 20 տրութիւնն յազազս առատանիք ձեռացն: Սա մերժէ զազգ Բադ-  
 րատունեաց, ոչ լինել Թագապիր ինքեան ըստ արիւնի Թագատրա-  
 ցըն և կտարէ զորդիսն Սանատրկոյ, որպէս եւ՝ զորդիսն Արգա-  
 րտու Եւ զմի սմն յորդոցն Սանատրկոյ առեալ սանտուն՝ փախեալ  
 ի սահմանս Հերայ և ժանուցանէ Սմրատայ Բիրատեան ի Սպեր  
 25 գաւառ: Իսկ նորա երթեալ վաղժազակի առեալ զմանուկն Արտա-  
 շէս, ի վանս հովուաց զազտագոյի սնուցանելու Եւ անցանէ առ  
 Գարեհ արքայ Պարսից և պատուի մեծապէս յազազս քաշութեանն,  
 և մանուկն կարգի ընդ որդիս արքայի: Այս որդիս Սանատրկոյ՝ Ար-  
 տաշէս, սնանի առ Գարեհի: Եւ յղէ առ Գարեհ՝ Երուանդ՝ տալ ի  
 30 ձեռս զմանուկն, և եւ ոչ առեալ յանձն՝ ապա Զայնժամ առտրեալ  
 Երուանդայ՝ կատարեաց զազապականն ի Բայրեքդի և զգատերսն  
 առեալ՝ զնէ յննի: Եւ ինքն ի կասկածանաց աղէտին հասելոյ Ար-  
 տաշէսի, տալ ձեռս ի Տիտոս և ի Վեոպիանոս, թողլով ի նոսա  
 զՄիլագեատու Եւ յայնմ հետէ բարձալ իշխանութիւն <Հայոց><sup>4</sup>  
 35 ի Միլագեատաց և յԵղեանայ և զրանցաւ ընդ տէրութեամբ Հոսո-  
 մաց: Եւ փոխէ Երուանդ զարքունիսն յԱրմաւրայ՝ յԵրուանդաբար:

<sup>4</sup> Մոզսէս Երթնայի, էջ 164:

248ր Յեա աշտորիկ Մոզսէս պատմէ զՅագաւորեցոցանեկն|| Արտաշէսի  
ի ԻՔ ամի Գարեհի: Եւ ինքն Մմբատ պատուի յարքայէ՝ հաւատա-  
լով ի նա զամենայն վերակացութիւն աշխարհին:

Հին անուանէ Բագրատունի

5 Ի սկզբան անդ, մինչդեռ ի հրէութեան արէնս էին ազն Բագ-  
րատունեաց, էր յորչորչումն անուանց նոցա. Բագադիա<sup>5</sup>, Տօրիա,  
Սդնան, Սարիա<sup>6</sup>, Վազարիա, Ենանոս: Իսկ որ աշտմ կոչին Բագ-  
րատունիք՝ ի Բագարատայ՝ Բագադիայէ, և Առուցայ՝ Աշոտ, և Վա-  
զարիայ<sup>7</sup> Վարազ, որպէս Շամբատ<sup>8</sup> Մմբատ փոխարկեցաւ:

10

ՀԱՌ ՀՆԵՏԱՄԱՆԵՐՈՐԳ

ՅԱՂԱՅՍ ԽԱՌՆԵԼՈՅ ԽՆԱՄՈՒԹԵԱՄԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ  
ԵՒ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ:

Կամիմ աստանաւոր ցոցանել զխառնիլն խնամութեամբ Բագ-  
րատունեաց և Արշակունեաց<sup>2</sup> և անդանաւոր սկիզբն արկեալ տես-  
չութեանն աստուծոյ՝ հանել զնոսա ի պատիւ և յաթոս թագաւորու-  
15 թեանն, զնախնոյն նոցա զԴաւթի մարգարէի և զաստուածաշաւ  
խոստացեալ խոստումն: Եւ վաւերական ասնէ զքան ճշմարիտ  
ուխտին՝ ի թագաւորական զնել աթոս, որպէս ի ձեռն հաւատալոյն  
ի Քրիստոս: Թագադիրք և ասպետք ճեմարեցան ի թագաւորացն  
20 Արշակունեաց, նա և խնամութեամբ ընդ նոսին խառնեալ՝ պա-  
տուազրեցան: Եւ իրրն կարի գովելի և ուղիղ կենաց զհեա և զեն,  
զԴաւթեանն ժառանգեցին ասումն և պատիւ՝ նստելով յաթոս նո-  
րա, ի վերայ քուրք Հայոց, թագաւորելով Աշոտ յերկրիս Հայաս-  
տանեաց ի Շիրակ գաւառի, ի Շիրակաւանն աւանի, որպէս հան-  
25 ղերէնալ եմք գրել: Բայց նախ՝ կարգեսցուք զխառնիլն խնամու-  
թեամբ, յետ աշտորիկ ապա՝ զգալն կարգաւ ի հարէ յորդի, մինչն  
յԱշոտ, նախնին թագաւորաց:

249ա < Ի > Թագաւորեցոցանեկն Թէոդոսի Մեծի զԱրշակ և զՎա-  
զարշակ՝ զորդիսն Պապայ, յետ սպանելոյն զՊապ, ի վերայ Հայոց,

5 2 Բագադիա

6 9 Սարիա

7 9 Վազարիա

8 29 Շամբոթ

1 2 Արշակունեաց

2 2 Արշակունեաց

Արշակ անու կին զգուսոր Բարկայ Միննաց իշխանին, իսկ Վազարշակ գեւսայանայ Սահակայ ասպետի Բազրատունու: Եւ աստանուր խառնեցան խնամութեամբ Արշակունիք և Բազրատունիք, որպէս և ասացաւ: Արշակ և Վազարշակ՝ որդիք Պապայ, Պապ՝ Արշակայ, Արշակ՝ Տիրանայ, Տիրան՝ Խոսրովայ, Խոսրով՝ Տրգատայ:

ՃԱԹ ՎԵՇՏԱՍՄԱՆԵՐՈՒՄ

ԳՈՐԾՔ ՍՄՐԱՍԱՆ ՔԱՂԻ

Է և այս գործք քաշութեան արժանի յիշատակի ազգին Բազրատուննաց: Վասն զի ի ժամանակին, յորում բմբռնեցաւ Արշակ Բազրատր Հայոց ի Թագաւորէն Պարսից Շապուհայ, որոյ եննգեալ յաղագս բմբռնմանն, ընդ սուր ելանէ կամաւորաբար և ճնտանի ի իւրժատան, յԱնուշն կուլեցեալ զգեկի: Իսկ Մենուսան Արժրունի, որացեալ և ի քաց մերկացեալ զգարո՞ Հուստոյն, անալ ի Շապուհայ իշխանութիւն՝ բնաբար կամէր Թագաւորել ի զերայ Հայոց: Եւ բազում նեղութիւնս և վիշտս անցուցեալ՝ ընդ կանայս աղատաց և ընդ որդիս նոցա՝ ստտակմամբ որոյ, զորս հանեալ յամբական տնկաց՝ կախէր զպարսպաց: Եւ և զմայր Պապայ՝ զՓառանձեմ, նախատամա՞ և անյիշելի ժահուամբ ստտակել: Ընդ որ յոյժ վշտացեալ ի դան անցից ազգիս, ներսէս Հայրապեան խրեղբրեալ ի Թէոդոսէ՝ զՊապ Թագաւորել, փոխանակ հարն իւրում Արշակայ: Եւ հնազանդեալ հրամանաց սրբոյն, Թագաւորն Մեծ Թէոդոս ալ նմա դար յաւանակահութիւն և արձակէ հանգերձ Հայրապետան ի Հայս: Որոց եկեալ պատահէին որացելոյն և որ ընդ նմա՝ Երեղիբն լաւուրաբ Պարսից, ի գաշտին Տիրան: Ծայնժամ ելեալ սուրբն ներսէս ի զլուս լերին նպտա և անգանաւր տարածէ զքաղախան, որպէս նախնին մարգարէից ի պաղատանս առ աստուած, և խորտակեալ զկանդի ուրացողն և անաստած գունդն: Ծայնժամ մարտի քաջ՝ և ընտիր ասպեան Սմբատ, որդին Բազրատայ, Բազրատունի, մեծ քաշութիւն և հանդէս առաքինութեան կատարէր, ազնակահնութեամբ աղաւթից սրբոյն և զարացն Հոստմոց: Ծորում և Վամսարտեանն Սպանդարատ զբաշն և զանուանին

1 9 զգուսոր  
2 2 անուշնայ

3 9 Տիրան  
4 2 քաղ

Ենթդիր հարեալ՝ իբրև գշանթահար՝ յերկիր կործանելի, և անդա-  
 նաւր դիակամբ շատանայր վայրն ամենայն: Իսկ աստուածու-  
 րացն Մենչութեան ոչ կարաց փախչել: Երում հասեալ բաշ սպա-  
 րապետն Մաթատ և զառհաւատչեայ՝ յաւերժական՝ այրմանն տայր

5 ըմպել նմա: Զամենայն փախստեայտն, որ ընդ նմայն, սա-  
 տակէ բազկաւ և սրով, և զուրացողն ձերբակալ արարեալ ի կո-  
 զովտի, յման Մասեաց: Եւ խորհեալ սպարապետին, թէ զուցէ  
 ինայնչեղ ի նա սուրբն ներսէս, անգամաւր դասնէ պատարաստ-  
 կան կրակեաղ, զի խորովէին միս: Եւ ասեալ անտի գշամփութն

10 երկաթի յնոսնդան հրոյն արտաշիկացոյն փայլեցուցեալ և բոյր-  
 րեալ անուամբ, ասէ ցնտ. «Մ՛կ, զի պտակեցից զզուտեգ տիրամո-  
 րաց, շի ինձ հաւատացեալ է ասպետականն թագադրութիւն՝, և դո-  
 թագաւորել Հայոց նկեալ ևս այրու: Անգամաւր սատակի ամբար-  
 րիշան սատակի սատակամբ, և փառաւորի անունն աստուծոյ:

15 Իբրև առ զիշխանութիւն թագաւորութեանն Պապ և խոտորեակ  
 ընթացիւք անուր լեալ խրատու սրբոյն ներսէտի, գնայր յանար-

250ա ժան և յանազաւս վարու Եւ սխացեալ: Ընդ նմա, բարոյն՝ շաբ-  
 փոխարեւ հատուցանէ, ի ձեռն զեղոյ բարձեալ զեա ի կենաց: Եւ  
 փոյթ ընդ փոյթ ըմբռնեալ զՊապ Քչոցոս՝ սատակէ սակրաւ, ըն-

20 կաշեալ զմասնաւորն վրէժ: Եւ զկնի Պապայ թագաւորէ Հայոց Վա-  
 րազդատ զամս Գ, որոյ իրազգաց՝ եղեալ Քչոցոս, եթէ տայ ձեռն  
 ի Պարսս, և զնա սատակէ: Եւ փոխանակ նորա զորդին Պապայ՝  
 զԱրշակ և զՎազարշակ, թագաւորեցուցանէ: Ճաւորս սոցա, որպէս  
 Պատմութեանն իրում սկիզբն զնէ՝ Ղազարիկ պատմագիր, իբր

25 զհնացեալ ձոր՝ յերկուս պատասնցաւ թագաւորութիւնս Հայոց:  
 Զերկիրն Այրարատեան մինչև ցարձմանս Պարսից՝ ասնու թագա-  
 ւորն Պարսից: Եւ զմնացեալ ժամն ասնու Արկաղէոս, որդի Մեծին  
 Քչոցոսի, և տայ ի ձեռս Արշակայ, զարաւար զնա եղեալ յեսս  
 քնդղէմ իշխանութիւն տունալ կայսերն: Իսկ թագաւորն Պարսից

30 Եսպուտ՝ տայ զիւր հասեալ ժամն ի խորով ոմն Արշակունի: Զոր  
 յուեալ նախարարացն, որք էին առ Արշակ, զարձան առ խորով ի  
 տունս իրեանց:

3 Զ շահահար 6 Զ Եւրապոսութիւն  
 4 Զ զառհաւատեալ 9 Զ իրազգաց  
 7 Զ յաւերժական

ՎԱՍՆ ՍՄԲԱՏԱՅ ՔԱԶԻՒ ԶՐՈՅՅԲ

Ը՛վ զերծանող սիրելի, գիտեա՛ հաւաստի, զի ի մտի եղի գրնչ  
 ծալբարազ աստ և անց զանուանս Բաղրասունեացն միայն՝ մի  
 5 զհետ միոյ: Յաւուրս բաժանման Թաղաւորացն մերոց, ՄՂՔ՝ ոչիմ-  
 պիագին, ի Քրիստոսէ Ե՛ձԼ էին ամբ, յեթն ամին Արկաղեայ՝ սրդ-  
 տոյ Թէոզոսի Մեծի, և ի Շապուոյ ՀԱ ամին: Այս Շապուո՛ւ և Խոսրով՝  
 250բ իսկ սա ձգտեցաւ՝ ՀԳ ամ: Ի սորա||ՀԱ ամին նստի Թաղաւոր Հա-  
 10 յոց Վառմշապուո՛ւ, և սուրբն Սահակ՝ Հայրապետ, սրդի մեծին  
 Ենթաշտի: Անտի մինչև յայս Քաշ Սմբատ՝ են ամբ ճԱԵ: Եւ կացին  
 ի Շապուոյ մինչ ցայսր. Արաւաշիր՝ ամս Գ: Վառմ, որ և Կրման՝ ԾԱ:  
 Յաղկերտ՝ Ժ: Վառմ՝ ԻԱ: Յաղկերտ՝ ԺԲ: Պերոզ՝ ԻԳ: Վաղարշ՝ Գ:  
 Կաւատ՝ ամս է: Զամասպ՝ Բ: Կաւատ՝ ԺԷ: Խոսրով հաւատացեալն՝  
 15 ամս ԽԸ: Որմիզզ՝ <ԺԲ>՝: Խոսրով Ա: Ի Թաղաւորութեանն  
 Պարսից Խոսրովի և Հոռոմոց Մարիայ, ի Հայրապետութեանն Հա-  
 յոց Արբահամու Ռշտունեցոյ, ի Թուր Հայոց ԽԹ, ի ՇՂԱ ամին ի  
 ծնեղենէ Քրիստոսի, Սմբատ Քաշ Բաղրասունի բազում և անհա-  
 20 րին մարտս յարդարէր ընդզէժ Բշնամեաց Խոսրովու Պարսից Թա-  
 զաւորի, ընդ որ յաւէտ իմն հաճոյանայր արքայ և ընց ալլ բազում  
 ընծալից և՛ զմարզպանութիւն Վրկանայ տայ նմա: Որոյ երթեալ  
 անդ՝ գտանէ ազգ մի գերեալ ի Հայոց և ընակեցուցեալ ի Քուրբաս-  
 տան կողմանէ, որ Սաղաստանն անուանի, մոտացեալ զլեզու և  
 25 զգիր հայերէն: Որոց տեսեալ զՍմբատ՝ ուրախ լինելին: Եւ նա  
 Եորոզէ դարձեալ զլեզու և զգիր հայերէն ի ձնն Աբելի՞՞ երիցոյ՝ և  
 տայ զնոյն առաջնորդ Եոցաւ: Եւ եղիսկապոս յետոյ մեծնազդեալ  
 Մովսէսի զԱբելչ, Իսկ յետ աշտորիկ հրաման ընկալեալ Սմբատայ  
 գալ ի տեղի ծնեղեան իւրոյ և կենալ ի Գժին, շինէ զսուրբ Գրիգոր,  
 զորոյ առեալ հրաման յարքայէ: Իսկ պահակի բերդին յարախաւէ  
 30 առ արքայ, յորոգալի՞ բերդին գոլ գայն: Եւ արքայ պատասխանէ,  
 զի բերդն քակեցցի և կենդեցին շինեսցի, զոր յառաջագոյն ի փայ-  
 251ա առ և յաղիւտէ, սրբոյն Վարդանայ էր շինեալ: Եւ իրն կեն|| Քաշն  
 Սմբատ, ետես յառաջնորդէ որբ զենկեցցին, զի էր վախճանեալ Մով-

1 2 Յերմեցու

3 Գ Լարելի 2 Լարելի

2 Սովակի Անեցի, էջ 76:

4 2 իրեցոյ

սէս: Կարգէ յառաջնորդութիւն Հայոց զԱրքայնամ Ռշտունեաց եպիս-  
կոսոս, ի զեղչէ Ազրաթանից: Եւ ինքն Քաշն Սմբատ շինէ զեկեղե-  
ցին, զսուրբ Գրիգորն, քարիս և կրով:

ՎԱՏՆ ԵՄԵՆԸ

- 5 Վահրամ Մեհեանդակ, իշխան արևելից, յաւուրս Որմզղի  
որդու, խոստովանող խոսրովու: Սա հարկանէ քաշութեամբ զգարն  
Քեռազաց և բանութեամբ ունէր զերկիրն Քուշունաց և զմայրաքա-  
զաք նոցին զՔաշխ, մինչև յայնկոյս Վեհոստ զետոյ: Այլ և զՄազ-  
րքիաց զարսն կառորեաց և զՄազաւորն սպան և զանբաւ ասարն  
10 զարացն իւր բաշխէր և սակաւ ինչ Որմզղի առաքէր: Ընդ որ զաշ-  
րացեալ Որմզղի առաքէ փուշտիպան՝ ժողովել ի զարացն զա-  
ւարն: Իսկ զարսն սպանեալ զփուշտիպանն, թագաւորեցուցին  
զՎահրամ Մեհեանդակ, զոր լուեալ Որմզղի փախստական լինի և  
ի զարացն մեռանի: Ապա զորդի՞ նորին զխոսրով թագաւորեցու-  
ցին, որոյ անկեալ առ Մաւրիկ: Եւ նորա առաքեալ զար և զՄուշեղ  
15 Մամիկոնեան՝ սպանեանէ զՎահրամ և առնու ի խոսրովէ փոխանակ  
այնր զերկիրն Հայոց մինչև ջԿոզովիտ<sup>7</sup> և ջԼուրաստան զեա, և  
զերկիրն Վրաց մինչև ջՏփլիս: Այս խոսրով առնու կին քրիստո-  
նէ, Շիրէն անուն և տայ նմա համարձակութիւն զան հաստոյ:  
20 Եւ նա մերձ յապարանսն զանա շինեալ՝ կարգէ ի նմա քահանայս:  
Եւ Մաւրիկ խնդրեալ ի խոսրովու զմարմին մեռելոյն, որ կայր ի  
զանձս արքունի և զեալ յաւազան պղնձի, զոր Պարսիկն Կաւ խոս-  
րով անուանէ և Հայք՝ զԳանիէլ մարգարէ: Եւ իբրև ածին շորիս  
250բ և ի հանին ընդ զուսն՝ սապարճչս երեք, զարձան անդրէն շորիցն,  
25 առաթուր հարկանելով, և անդէն արձակեցան բոլորսն շուրջ, զոր  
իմացեալ կայսեր՝ պատարագուք պատուեալ զեա:

Հայսու ժամանակաւ զՍմբատ թագրատունի շարախուսեալ սա-  
րան ի զուսն արքունի, և հրամայէ այրալ արկանել կուր զազա-  
նաց: Եւ ազազակեալ Սմբատայ ի ձայն մեծ և հարեալ մուրցացի  
30 զձակատ արշոյն՝ սատակեաց: Եւ կալեալ զեղջերուաց ջրոյն՝ սա-  
տակեաց: Եւ իբրև յաւելին արձակել առիժ մի, ընթացեալ հզար  
զարութեամբ արիականաւ կալեալ զականջաց առիժուն՝ հեծաւ ի  
զերայ առիժուն: Եւ իբրև ետես զայն քաղմութիւնն՝ զազազակ

5 Գ լիք  
6 Գ չորդիս

7 Գ զԿոզովիտ  
8 Զ զուսն

բարեկալ զիմեցին առ ռոսս թագաւորին, խեղդելին վասն աշխարհու-  
 ւոյ բաշի սղորմութիւնս: Յայնժամ հրաման ել ի թագաւորէն՝ տանել  
 զնա ի բազանիս և զարդարել: և արարեալ զնա արիւրուն զաւրացն,  
 որ յԱֆրիկէ: Իսկ էր նա հասակաւ բարձր և լայն, և գեղեցիկ անս-  
 5 լեամբ: Նա լինէր, յորժամ անցանէր ընդ անտառս, բուն հարկանէր  
 զձաղկից անտառին և կծկեալ ոտիւրն՝ վերացուցանէր զերիվարն:  
 Իսկ բաշն և արին զկնի ախարիկ մեռալ ի Տիզրոն, բարւոք բազա-  
 րավարութեամբ, և բնրեալ հզաւ ի Գարոյնս<sup>9</sup>, ի Կոջ զաւառ: Իսկ  
 10 զկնի նորին, որցի նորին Վարազտիրոց անուս զիշխանութիւն Հա-  
 յոց ի թագաւորէն Կառատայ՝ որդոյն ետարովայ, և առաքի ի Հայս:  
 Որոյ եկեալ եզիտ վախճանեալ զԿոմիտաս: Ապա զՔրիստափոր<sup>10</sup>,  
 շնորհաւամեան տանել, կարգէ առաջնորդ Հայոց, ձեռնատուութեամբ  
 Քէղզորոսի Ռշտունայ, զամս Բ: Իսկ զկնի Քրիստափորի, Նջր  
 եկաց կաթողիկոս Հայոց զամս Փ, յաւարս Հերակլի - և Գարսից  
 25 Հա նոսնայ:]]

ՀԱՅ ՌԻՓԵՆՏԱՅԻՆՆԵՐՈՐԿ

ՎԱՍՆ ԱՌԱՍՊԵՆԱՑ ԱՆԱՌԻՒՆ ՄԱՀՄԵՏԻ ԵՒ ԼՈՐՐՆ ՍՏՈՒԹԵԱՆՆ,  
 ԶՈՐ ԽԱՅՏԱՌԱԿԷ ԼՈՐՐՆ ԱՇԱԿԵՐՏՆ

Իրրե եհաս մեզ պատմել զանաւորեն Մահմեալայ՝ զիցուք զկնի  
 20 զմուրաւթեան նորա զյանախութիւնն, զի իսպառ առեցես և փա-  
 խիցես ի սորին անուանէ, ո՞վ դու, քրիստոսասէր անձն: Զոր մինչե  
 ցայսուր, զնո ևս անգիտութեամբ երթեալ ի Հէճն և ի Մարջայ մա-  
 տուցանեն: Եւ ինչ<sup>1</sup> զիւաց և կատարեն անմտարար զխորհուրդ  
 առաջին կռամոյ զիսպաղաշաութեանն, ոչ զիտելով զինչ գործենն:  
 25 Զոր աստի կարեա զիտել զգործս նոցա, զոր նորայն անգիտարար  
 համարին աստուածպաշտութիւն զզիւապաշտութիւնն: Նա եղև,  
 ասէ, ի ժամանակին յայնմիկ այր մի անուն Մահմեա, յազգն որ  
 կոչի Կուրէշ, յորդոց Կեղարայ, յնրկոտասան ցեղից Իսմայէլի:  
 Որոյ եկեալ ի սուրբ լիառն Միքէական՝ աշակերտեցաւ միայնակեցի  
 30 ումեմն, որ զիտէր յնզու իսմայէլացի<sup>2</sup> և պարսիկ, անուն Քիսիրայ,  
 որոյ առեալ զնա՝ կամելով Հշմարութեամբ ամենայնի ի վերայ  
 հասուցանել: Սկիզբն արարեալ ի լինելութենէ արարածոց, ոն եղեալ

<sup>9</sup> Գ Գարունս

<sup>10</sup> Չ զՔրիստափոր

<sup>1</sup> Զ Կրկնս

<sup>2</sup> Չ Իսմայէլացի

ընթեանոյր՝ եմա զգիրսն Մենգոց և զայսն ամենայն կարգաւ, և  
 զնոր Կառկարանս, և զգիրսն, զոր Յիսուսի Մանկութեանն կոչեն:  
 Եւ մինչդեռ ականջալուր միայն եմա էին գիրք աստուածաշունչս և  
 ոչ հասու յնալ ստուգապէս, հասնալ եմա պատճառ՝ զնալ ի ներք-  
 5 սագոյն անապատն և այնուհետև ոչ ևս զստեալ առ վարդապետն  
 իւր: Եւ ոչ միտք նորա սիրեցիկն զքրիստոնէութիւն, այլ խորհուրդք  
 նորա յուզէին զիտել, թէ զի՞նչ է հրէութիւն: Եւ պատահեալ եմա  
 Հրէի ուժեմն վանառականի՝ տեղեկացաւ ի եմանէ զկարգ և զհա-  
 10 ւատ նոցին. անգոսնեաց և զայն նս: Եւ սկսաւ մտացածին յինքնն:  
 Եւսել հաւատ նոր՝ Եշմարտութեան հակառակ և ստութիւն, և խո-  
 252բ տեալ զամ||ենայն պաշտամունս՝ եման նեոխնն և զիրն միայն  
 աւրինագրէր: Երթեալ ի գեղն Մարայ, որ անդր է քան զնիփոքիփ  
 Մաղինայ՝ որ է նոցա ըաղաք, քարոզեաց ըստ կամաց և ըստ արտը-  
 ժակաց: Ասելով զտուն տոհմարանին, այս ինքն՝ պաշտաման աւ-  
 15 ձից, տուն աստուծոյ և տուն Արրահամու և անուանեաց Ալ Քարբա:  
 Եւ ասաց, թէ Իսմայէլ արար կինն, և սա է տուն նորա: Եւ կարաւ-  
 տացեալ տեսանել զնա Արրահամու՝ առ ջնառայ. «Արևակեա՛  
 զիս, զի երթեալ տեսից զորդին իմա: Իսկ Մառայի երկուցեալ, թէ  
 20 գուցէ մերձնացի առ աղասիինն, զերզումն աստուծոյ զնէ ի վերայ  
 նորա, թէ «Մի՛ իջցես ի գրաստէղ ի գետին, այլ ի վերայ կալով քո՝  
 տեսցես զորդին քո և զարձգիս այսրէնա: Եւ եկեալ նորա՝ ոչ պա-  
 տահէր Իսմայէլի, քանզի յորս զնացեալ՝ էր: Եւ հարցանէր ցկինն,  
 թէ «Մի՛ր երթեալ է այրն քո: Եւ նորա թշնամանեալ՝ անգոսնեաց  
 25 շնա, առ. «Ձառանցեալ, խանդարեալ ալեոր, յի՞նչ պատ խնդրես  
 զայրն իմա: Եւ նա առ. «Անացես ցայր քո՝ Ոչ բարեք են գրունք  
 տան քո, ի քաց փոխեա՛ զգա, ա՛յլ անեկով գրունա: Եւ եկեալ Իս-  
 մայէլ յորտոյն՝ ոչ ասաց եմա կինն իւր, անփոյթ արարեալ զպա-  
 տուէրն Արրահամու: Այլ Իսմայէլ ասեալ զհօտ հարն՝ հարցանէր  
 ցկինն, թէ «Ե՛կ ոք այսր: Եւ նա առ. «Այնոր միս: Հարցանէ Իս-  
 30 մայէլ, թէ «Զի՞նչ խառնեցաւ, և պատմեալ կնոջն: Գիտաց Իսմայ-  
 յէլ, եթէ զկնոջէն ասացեալ է, արևակէ զնա և այլ ասուո կին:  
 Սոյնպէս պատահեալ երկրորդ կնոջն և երրորդ, մինչև ցելթներսդն:  
 Եւ նա առ ցԱրրահամ. «Երբի եկիր, հա՛յր, էջ ի գրաստէղ, զի  
 ամից զգուփ քո: Եւ նա առ. «Ոչ հաւանիմա: Եւ իրն թախան-  
 35 ձէր զնա կինն, իջեալ Արրահամու ոչ ի գետինն՝ վասն երգմանն

3 4 ընթեանոյր  
 4 29 անցեալ

Մատայի, այլ՝ մի սակ ի վերայ վիմի և մի սակ՝ հեծնելոյն: Եւ վիմն  
 253ա տեղի տունայ ուրին՝ յցուցանէր զտեղին: Զայս այսպէս ուսոյց  
 յառասպելաց: Եւ յամենայն կողմանց զծրհրպագութիւն շարին աշ-  
 միկ և տանն հրամայեաց մատուցանել: Եւ ի ներքս ի տանն, զալով՝  
 5 շուրջ զքարին, երկրպագն հրամայէր, որ միւս վիմն է և ծակ ա-  
 ձիցն: Գարձնայ՝ զարտարին վիմովն, ուր սանահանն Աբրահամու,  
 հրամայեաց շուրջ դալ միտանի վազվազելով, ասել. «Երայր,  
 չբայրս, որպէս թէ պատասխանի սամեք ասնելով՝ «Յայ, յայ, ասա,  
 ասաս:»  
 10 Գարձնայ՝ ի ձորն անցեալ, որում Վորզն ալ Համարն կոչեն,  
 ասննն ի նմա սպանումն անասնոց: Եւ հեծեալ ի դրաստ՝ փախչին  
 անգառնալի միելն ցբխրն, մերձ ի Մարայ: Եւ ի փախչելն, եթէ  
 բանկոն ուրուք անկանիցի, և զհեծնայն իւր շարզ, ոչ դանկան յա-  
 րուցանել: Եւ յետ այնորիկ, ընթանալով ի մէջ երկուց վիմաց հե-  
 15 տի, զոր անուանեն՝ Մափա և Եմբան, ընթանան վիմէ ի վիմ է ան-  
 գամ անհանգիստ, որչափ և ումն բաւական լինի: Եւ յետ այնր ըն-  
 թանան յայլ տեղի, զոր Մարայ ալ Հաս անուանեն. է անգամ ըն-  
 թանան և զքարինս ձգեն և ոչ յայտ է, թէ ո՞ւմ զքարինս ձգեն:  
 Այլ միայն ասեն, եթէ՝ «Մահմետ այսպէս արար: Եւ հրամայեաց՝  
 20 ասելով, թէ Աբրահամ զոյնպէս արար: Անզգուշութեամբ է ասոց-  
 եալն ի նմանէ, զի ասաց՝ ոչ էչ ի դրաստէն և յետոյ ստեաց, թէ  
 ընթանայր և շարինս ձգէր: Եւ ոչ սպանանեն ի տեղուոյն յայն զե-  
 սունս և սողունս և գազանս, զասն ումիցն, որք բնակեալ ի տանն,  
 խտան ընդ մարդկանն շրջին և ոչ վնասեն ումեք, զորս մուսլիմս  
 25 անուանեն, այս ինքն՝ հաւատացեալս: Եւ պատեալ ծածկեն դասնն  
 է հանգերձիս, և համբոյր երթեալ հանգերձին ի վերայ աւաց զենն:  
 253բ Արդ՝ ոչ երեկ ի ձեզ մուրս խաբէութիւն շողփազփ||ութեան  
 նոցա: Բունդի բազումք ոչ զիտացեալ զայս ամենայն՝ տեսանն  
 զազգս մարդկանն յամենայն պաշտամունսն պարսպ և փոյթ յա-  
 30 զաթս և խաւել հանապազ աստուծով և կարծեն՝ հաւատացեալս:  
 Վասն որոյ կարևոր համարեցայ յայտնել զծածկեալս խաբէութեան  
 նոցա: Տունն, զոր կոչեն Աբրահամու, ոչ երբէք երթեալ անո՞ք Աբ-  
 րահամ և ոչ Իսմայիլ, որպէս և աստուածայինքն վկայեն պատմու-  
 35 թիւր: Այլ է նա սուն կոոց և անից պաշտաման, զի ասհմարան  
 գու ի միջոցի տանն, ուր սնուցանեն զամսն միելն ցայտար ծա-

1 20 կալով  
 7 20 ուրիցն

մանակի, որպէս և ասացաք: Իսկ զկուսն բարձեալ ասպասակին  
 նգրպատացոց, որք ի ժամանակին Տրաշխանոսի<sup>9</sup>, քանզի անզրիք  
 պղնձիք էին ընդ ալլ զիսն, զոր կանգնեցին<sup>10</sup> յԱղեքսանդրիայ<sup>11</sup>,  
 3 մայնժամ Տաճկացն գտեալ զալլ կուս, այս ինքն՝ զկուսն Գա-  
 մասկոսի<sup>12</sup>, Թիմանայ շանապատի ուրեմն: Զոր ի զալլ քրիստոնէութեանս՝  
 ներկուցեալ քրմաց նորա, թէ գուցէ ի ձեռն քրիստոնէիք  
 անկեալ փշրեսցի՝ առեալ փախստական զնացին յանապատ անդ:  
 Զայն վերջոյ գտեալ կուսպաշտացն Տաճկաց, տարեալ ի Մարայ  
 հանդերձ քրմով նորին, ի տունն յայն՝ յայտնի տեղի առաջին կուսն  
 10 կամեցան կանգնել<sup>13</sup>: Իսկ անապաշտ քրմացն, ոչ հաւանեալ  
 զկուսն առարաց քրմաց յիրեանց տանն կացուցանել, հաւանե-  
 ցուցեալ զամբօխն՝ գտունն ամիցն միայն քաւական լինել. որպէս  
 թէ ոչ ախորժեցին ամբն կուսաբ բուրձն յիրեանց քնակարանի:  
 Եւ այսպէս քաղբազեալ, արտաքոյ զրանն կացուցին զնա, ի վերայ  
 15 վիմին, ի միոյ տան վերայ կաշով և զմիան ի վեր ունելով, իբր  
 թէ աշխպէս է պատկեր Թամանայ, իբրն զեփեառեայ պատկերն: Եւ  
 25 4ա թէ՛ նա ինքն է Թամանն, Եփեսոսս թ|| Գամասկացոցն անուանեալ:  
 Եւ նոցա նրկաթով փորեալ և կապարով պնդեալ՝ ի մի ստինն կա-  
 ցուցին զնա ի վերայ վիմին: Զոր ի ժամանակս Թէոզոսի, յւ զգու-  
 20 շանայ պաշտանէիցն, յի արտաքոյ կայր շինի, գրգայեալ եղն ի  
 վանառականաց Եթէուպացոց յաղագս ոսկոյն, վասն որոյ և պա-  
 տերազմ եղն ի մէջ նրկոցունց: Պատմեն յեզրպատս աւանդութեամբ  
 մինչև ցայսար. Այս ռանաճեալ է ի վերայ վիմին, զոր ասաց Մաճ-  
 մեո՝ Արբաճամու լինել, որ և միտասնի շուրջ գալով<sup>14</sup> Տաճկաց-  
 25 զմիտամոսն Թամանայ<sup>15</sup> բերելով զնն և դիւի նորա նրկիք պազա-  
 նեն և ձայն ասն և ոչ զիտեն: Եւ և ոչ զայն իմանան, թէ ո՞ւմ ց-  
 նատուսն<sup>16</sup> կոտորեն ի ձորն և կամ յո՞ւմ մէջ փախչին: Ալլ մեր  
 քնեալ հասու եզար, թէ Մաճմեոի մեկուսացեալ ի բազմաց մարդ-  
 կութենէն ի ձորն, արար զո՞ւ ամենայն զիւացն: Զոր դիմեալ զնքն  
 30 ի կերպարանս մարդկան տեսիլ ական<sup>17</sup> նրկեցան, յորոց զարհու-  
 րեալ Մաճմեո՝ փախեալ. զնոյն և ամանցեաց: Իսկ որ [ի] մէջ  
 վիմացն ընթանան՝ վէմք նախիկ նոցա պաշտանք լեալ էին, քան

9 29 Տրաշխանոսի

10 2 կանգնեցին

11 2 Աղեքսանդրայ

12 29 Գամասկոսի

13 2 կանգնել

14 29 գալով

15 29 Թամանայ

16 9 զանտուսն

17 29 ակնպան

5 զկուսն առաջինս, որպէս զայն վէճ, որ ի ներքս ի տանն է: Եւ  
 զնքն յերկուց վիճացն, զՄահճեօթ պաշտօնն ինքեանց ստիպեն:  
 Վասն որոյ այսր անդր ընթանայր ստիպով ժողկեանալ, զնոյն և  
 3 արիւնազրեաց: Գարձեալ՝ փութով ի պաշտօն տանն ելնալ, և շուն  
 ինչ կատաղի գհեա ելնալ ժաւա<sup>16</sup> յառնուլ, իսկ Մահճեօթ քար  
 25 Գ ձգեալ՝ զերժանի. զոր վարկեալ յաւտար<sup>17</sup> և խափան ինչ<sup>20</sup> նորա  
 Է անգամ երթեալ անդ՝ յոյժ ստեն: Եւ որ զառդունս, և զզեռունս, և  
 զգազանս ոչ սպանեն՝ պատի և պաշտօն ամբիցն անեն: Որպէս և  
 10 ժողպեաքն ի թղթին Յազկերտի ի Հայս, զսոյն արիւնազրեցին, թէ  
 ամբ և ժողկզք և այլ ճճիք մի՝ սպանցին, վասն զի աստուածք էին  
 և պաշտամունք առ նոսա: Զայս ամենայն երանելի այրն, որ յոյժ  
 սեղեակ էր և եկն ի Կրկնէս կզգի, հաւատաց, յայտնեաց և ծանոյց:

ՃԱՌ ԻՆՆԵՒՏԱՆՆԵՐՈՒՄ

15 ԱՐԻ՝ ՊԱՏԵՄԵՅՈՒՔ ՎԱՍՆ ՄՍՀՈՒԱՆՆ ԵՐՈՒ,  
 ԱՐԳԱՐԵՒ ԱՐԺԱՆԻ ԾԱՂՈՒ

Քանզի իբրև մեռա Մահճեա, պատեալ եզին զնա ի պարտիզի  
 իւրում, ոչ թազեալ, վասն զի խոստացաւ՝ յերիբ ատար յառնել:  
 Եման Քրիստոսի: Եւ ի քուն լինել պահապանացն՝ մտեալ շանց, կե-  
 րան զերեսս մեռելոյն: Եւ յայնմ հետէ արիւնազրեցաւ յաշակեր-  
 20 տաց Եօրա՝ ի նոյն ամսուջ աստակել զշունս, որ մինչև ցայսար կա-  
 լեալ զսոյն սովորութիւն, սատակեն զշունս ի նոյն ամսնան: Այլ  
 առաւել է, թէ զկրտսնից և զկարգաց և զպատաստեաց Եօրին աստ-  
 ցից, լի յիմարութեամբ: Եւ եզ ի քերտե աշակերտելոցն կարծել, թէ  
 որպէս վասն Քրիստոսի զուշակեցին մարգարէքն, սոյնպէս և զՄահ-  
 25 ճեառայ զուշակեցին: Եւ շանակելով զկոշումն մարգարէութեանն, Յի-  
 սուս՝ իշով, և սա՝ ուղտով, զԵօսայեալ տեսին անեալ իրեանց վկա-  
 յութիւն. սէճեմալ մի, ասէ, տեսի իշոյ և հեծեալ մի՝ ուղտոյս՝: Զայս  
 ասէր ի բազարին իւրում Մազինայ, մինչդեռ նստէր ի բազմամարտի  
 հրապարակին: Եւ մինչդեռ խաւտէրն, աներևոյթ եզև յաւաց տեսու-  
 30 թենէ ժամս հարուստ: Եւ կալաւ ափշութիւն մեծ զամենեսին: Եւ ապա  
 255 մինչդեռ խաւտէին՝ եկաց ի մէջ նոցա և ետ ողորն և առէ: Եւ Եօ-  
 զազութիւն ընդ ձեզ և ողորմութիւն և շնորհ: Ապա զարհուրեալ հրա-

\* Եւսայ. ԻՄ 7  
 18 29 մտա

10 28 յաւարդ  
 20 9 խափանի:

ցան և ասեն. «Ուստի՞ զաս, կամ զի՞նչ է ողորմնոց այդ, կամ յորս՞ց  
 աստուածոց բերեր զայդպիսի բան ողորմութեան և շնորհացու մտ  
 պատասխանի. «Ահա՛, մինչդեռ խառտէի ընդ ձեզ, յափշտակեցաւ  
 ի հրեշտակէ և գտայ ի Մարայի՛, ի տան հարց մերոց՝ Աբրահամու  
 5 և Իսմայէլի, զոր շինեալ զնա տուն աստուծոյ և մեզ ի ժառանգու-  
 թիւն, որպէս երբեմն զնորուազէմ Հրէիցն շինեալ և մարգարէիցն՝ առ  
 ի քնակութիւն որդոցն Իսրայէլի: Զի լուեալ զյափշտակելն Ամբա-  
 կումայ յերուսազէմէ ի Բաբելոն առ Դանիէլ, սայապէս զինքն հա-  
 մարեալ ասէր առ նոսա, որ ոչ երբէք ճշմարտութեամբ էին բան-  
 10 քըն: Սածկէր առ ի նոցանէ՞, թե էր նորա տեսնալ զՄարայ և պատ-  
 մէր առաջի նոցա զարթնակ տեղուն, զվայրացն և զշինուածոցն  
 և զսմեհեան նշանս սահմանացն նա նոցա զի. թութեամբ՞, որպէս  
 և տեղեկացեալն էր ի մանկութենէ: Վասն որոյ զարմացեալք ամե-  
 ներեան ասէին՝ զնա մարգարէ գոյ: Եւ իբրև լուսա զայս ի բերանս  
 15 նոցին, համարձակեցաւ քարոզել և ասել. «Վկայեցէք, թէ չիք աս-  
 տուած, բայց միայն ինքն, և ոչ զոյ նորա ընկեր և Մահմետ ծա-  
 րայ նորա և առաքեալս: Զայս այսպէս իմաստասրբեաց, զմի աս-  
 տուածն ասելով ըստ հրէականին Իսկ ասելովն, թէ չիք նորա ըն-  
 20 կեր, այսու բաժանէր զորդի և զհօգի ի չարէ: Եւ այսպէս ուսու-  
 ցանէ նոցա, թէ «Զոր հարցն մեր պաշտելիս և մարգարէքն՝ զայն  
 աստուած քարոզեմ ձեզ»: Եւ այսու հասանեցուցանէ զժողովուրդն:  
 Եւ զարձնալ՝ որոշէ զնոսա ի հրէականացն, որ մարդ միայն և որդի  
 Յովսեփու ասացին զՔրիստոս և յինքեանց խաշեալ, Այլ և սա  
 կոշէ զՅիսուս՝ բան աստուծոյ և հոգի առաքեալ ի Մարիամ յաստու-  
 25 ծոյ, և ասեալ ի նմանէ մարմին մարդկայալէ: Եւ զնէ վկայութիւն  
